

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է  
«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա»  
իրավաբանական անձանց միության  
«27» նոյեմբերի 2010 թ. ժողովի կողմից

Նախագահ՝

Ռ. Հայրապետյան

Տպագրված է ընդամենը 5 օրինակ

ՕՐԻՆԱԿ 1

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ  
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՍԱՐՄՆԻ  
ԿՈՂՄԻՑ փետրվարի 20, 2003 թ.  
Գրանցման թիվ 211.150.01601.  
Վկայական 03Ա 058513\_\_\_\_\_

Թիվ «001-2» փոփոխությունը գրանցված է ՀՀ  
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի  
կենտրոնական մարմնի կողմից 14.12.2006թ.

Թիվ «002-2» փոփոխությունը գրանցված է ՀՀ  
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի  
կենտրոնական մարմնի կողմից 11.01.2011թ  
պետական ռեգիստրի ղեկավար՝

Ա.Գևորգյան

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա»**  
**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ**  
(նոր խմբագրություն)

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ

ԷԶ

I. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	3
II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	3
III. ՀՖՖ-ի ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....	6
IV. ՀՖՖ-ի ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....	7
V. ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՖՖ-ին, ՀՖՖ-ին ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ՀՖՖ-ից ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԵՎ ՀԵՌԱՑՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ.....	9
VI. ՀՖՖ-ի ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	11
VII. ՀՖՖ-ի ՄԱՐՄԻՆՆԵՐԸ.....	12
VIII. ԺՈՂՈՎԸ.....	12
IX. ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵ.....	16
X. ՆԱԽԱԳԱՀԸ.....	19
XI. ՀՖՖ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԸ.....	20
XII. ՀՖՖ-ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ.....	21
XIII. ՀՖՖ-ի ԻՐԱՎԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ.....	21
XIV. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ.....	21
XV. ԱԿՈՒՄԲԼԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ.....	22
XVI. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ.....	22
XVII. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՊԱԼԱՏԸ և ԱՐԲԻՏՐԱԺԸ.....	23
XVIII. ՀՖՖ-ի ՄՇՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԸ.....	23
XIX. ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՖՈՒՏԲՈԼԻ ԿՈՄԻՏԵ.....	24
XX. ԻՐԱՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ.....	24
XXI. ԲԺՇԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ.....	24
XXII. ՖՈՒՏԶԱԼԻ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՖՈՒՏԲՈԼԻ ԿՈՄԻՏԵ.....	24
XXIII. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՖՈՒՏԲՈԼԻ ԿՈՄԻՏԵ.....	24
XXIV. ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ.....	25
XXV. ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԿՈՄԻՏԵ.....	25
XXVI. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ.....	25
XXVII. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿՈՄԻՏԵ.....	25
XXVIII. ՀՖՖ-ի ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ.....	25
XXIX. ԱԿՈՒՄԲԼԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԴԻԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ.....	26
XXX. ՄՐՑԱՇԱՐԵՐԻՑ, ՄՐՑՈՒՄՆԵՐԻՑ ԵՎ ԱՅԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ.....	26
XXXI. ԱԿՈՒՄԲԼԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.....	27
XXXII. ԽԹԱՆՑՈՒԹԵՐԸ (ԴՈՊԻՆԳ).....	27
XXXIII. ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՑԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ.....	28
XXXIV. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ՖԻՆԱՆՍՆԵՐԸ ԵՎ ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏ.....	28
XXXV. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽԱՂԵՐԸ ԵՎ ՄՐՑԱՇԱՐԵՐԸ.....	29
XXXVI. ՀՖՖ-ի ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ.....	29
XXXVII. ՀՖՖ-ի ԼՈՒԾԱՐՈՒՄԸ.....	30
XXXVIII. ՉՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ («ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ»).....	30
XXXIX. ՈՒԺԻ ՄԵԶ ՄՏՆԵԼԸ.....	30
XXXX. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	30

## I. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն կանոնադրության մեջ օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստը.

- 1) **ՀՖՖ**՝ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա.
- 2) **ԿԱՍ (CAS)**՝ Սպորտային արբիտրաժային դատարան (անգլերեն՝ Court of Arbitration for Sport), որը գտնվում է Լոզան քաղաքում (Շվեյցարիա):
- 3) **Գործադիր կոմիտե**՝ ՀՖՖ մշտական գործող ղեկավար մարմինը.
- 4) **ՖԻՖԱ (FIFA)**՝ Ֆուտբոլային միությունների միջազգային ֆեդերացիա (ֆրանսերեն՝ Fédération Internationale de Football Association), որի հիմնական գրասենյակը գտնվում է Ցյուրիխ քաղաքում (Շվեյցարիա).
- 5) **ՈՒԵՖԱ (UEFA)**՝ Եվրոպական ֆուտբոլային ասոցիացիաների միություն (ֆրանսերեն՝ Union des Associations Européennes de Football), որի հիմնական գրասենյակը գտնվում է Նիոն քաղաքում (Շվեյցարիա).
- 6) **Ժողով**՝ ՀՖՖ բարձրագույն մարմինը.
- 7) **Ֆուտբոլային ակումբ**՝ իրավաբանական անձ, որն անկախ իր կազմակերպչափրավական ձևից ՀՖՖ մրցումներում ներկայացնում է ֆուտբոլային թիմ/թիմեր և կրթում ու պատրաստում է ֆուտբոլիստների և որի հիմնական գրասենյակը գտնվում է Հայաստանում.
- 8) **ԻՖԱԲ (IFAB)**՝ Ֆուտբոլային միջազգային ասոցիացիաների խորհուրդ (անգլերեն՝ International Football Association Board).
- 9) **ՀՖՖ-ի անդամ**՝ ֆուտբոլային ակումբ կամ այլ կազմակերպություն, որը Ժողովի կողմից ճանաչված է որպես ՀՖՖ անդամ.
- 10) **պաշտոնատար անձ**՝ անձ, ով պաշտոնական դերակատարություն ունի ֆուտբոլում, այդ թվում՝ ՀՖՖ-ի կամ ՀՖՖ-ի որևէ անդամի որևէ մարմնի անդամ, կոմիտեի անդամ, մարզիչ, տեսուչ, մրցավար, մրցավարի օգնական կամ տեխնիկական, բժշկական և վարչական հարցերի գծով պատասխանատու այլ անձ.
- 11) **ֆուտբոլիստ**՝ ֆուտբոլ խաղացող անձ, ով գրանցված է ՀՖՖ-ում.
- 12) **ՎԱԴԱ (WADA)**՝ Խթանյութերի դեմ պայքարի համաշխարհային գործակալություն (անգլերեն՝ World Anti-Doping Agency):

2. Ֆիզիկական անձանց վերաբերյալ օգտագործված բառերը չեզոք են և կարող են վերաբերել թե արական, թե իգական սեռին: Եթե սույն կանոնադրության մեջ բառը նշված է եզակի թվով, ապա այն տարածվում է նաև այդ բառի հոգնակի թվի վրա և հակառակը՝ պայմանով, որ սույն կանոնադրությամբ այլ բան նախատեսված չլինի, կամ ուղղակիորեն այլ բան չլինի կանոնադրության բովանդակությունից:

## II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությունը (այսուհետ՝ ՀՖՖ) ինքնաֆինանսավորվող, ինքնակառավարվող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող

(ոչ առևտրային) կազմակերպություն է, որը ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի կողմից, Երևան քաղաքում:

2. Միացման ձևով վերակազմակերպվելու արդյունքում ՀՖՖ-ն հանդիսանում է «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության գույքի և պարտավորությունների իրավահաջորդը՝ վերջինիս գործունեության դադարման վերաբերյալ պետական գրանցման պահից:

3. ՀՖՖ-ն գործում է ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության համաձայն:

4. ՀՖՖ-ն ստեղծվում է հասարակական կազմակերպության կարգավիճակ ունեցող ֆուտբոլային ակումբների և ֆուտբոլ խաղի զարգացմանը նպաստող ցանկացած այլ ոչ առևտրային կազմակերպությունների կամավոր միավորումից՝ իր անդամ կազմակերպությունների գործունեությունը համակարգելու, ինչպես նաև իրենց ընդհանուր շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով:

5. ՀՖՖ-ն կազմավորվում է անսահմանափակ ժամանակով:

6. ՀՖՖ-ն 1992 թվականից ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի լիիրավ անդամ է և ունի Հայաստանի ֆուտբոլի հավաքական թիմերի, ակումբների, ինչպես նաև պաշտոնատար անձանց շահերն այդ կազմակերպություններում ներկայացնելու բացառիկ լիազորությունը:

7. ՀՖՖ-ն ՀՀ-ում կազմակերպում է ֆուտբոլ խաղը ԻՖԱԲ-ի կողմից սահմանված Խաղի կանոնների համաձայն: Ֆուտբոլ խաղի կանոնների սահմանումը կամ փոփոխումը ԻՖԱԲ-ի բացառիկ իրավասությունն է: ՀՖՖ-ն ՀՀ-ում կազմակերպում է նաև Ֆուտզալը և Լոդափնյա ֆուտբոլը՝ ՖԻՖԱ-ի Գործադիր Կոմիտեի կողմից սահմանված Խաղի կանոնների համաձայն:

8. Որպես ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի անդամ՝ ՀՖՖ-ն պարտավորվում է.

- 1) ապահովել անաչառության, միասնության և մարզական սկզբունքների կիրառումը՝ «արդար խաղի» կանոններին համապատասխան,
- 2) ապահովել Գործադիր կոմիտեի կազմի ընտրության ազատությունը՝ բացառելով ՀՖՖ-ին չպատկանող որևէ երրորդ կողմի միջամտությունը (օրինակ՝ քաղաքական),
- 3) ապահովել ԻՖԱԲ-ի կողմից սահմանված ֆուտբոլ խաղի կանոնների, ինչպես նաև ՖԻՖԱ-ի գործադիր կոմիտեի կողմից սահմանված Ֆուտզալի և Լոդափնյա ֆուտբոլի խաղի կանոնների կիրառումը,
- 4) ընդունել ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի կանոնադրությունները, կանոնակարգերը, շրջաբերականները, որոշումները, ինչպես նաև ՖԻՖԱ-ի Վարքագծի կանոնները:
- 5) ճանաչել ԿԱՍ-ի իրավասությունը՝ ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի կանոնադրությունների դրույթներին համապատասխան,
- 6) ՀՖՖ-ի կանոնադրություններից և կանոնակարգերից բխող ազգային մասշտաբի ցանկացած վեճի դեպքում, որպես վերջին աստյան, դիմել Ժողովի կողմից ճանաչված անկախ և անաչառ արբիտրաժային դատարան, որը վերջնականապես կապահովի վեճի լուծումը՝ բացառելով ընդհանուր իրավասության դատարանների միջամտությունը, եթե դա արգելված չէ ՀՀ օրենսդրությամբ,

7) երաշխավորել, որ ՀՖՖ-ի լիգաները, ակումբները, ֆուտբոլիստները, պաշտոնատար անձինք, խաղերի և ֆուտբոլիստների գործակալներն իրենց կանոնադրությունների, արտոնագրերի, գրանցման և այլ գրավոր փաստաթղթերի միջոցով ընդունեն և ճանաչեն վերոնշյալ պարտավորությունները, ինչպես նաև ՀՖՖ-ի կանոնադրություններն ու կանոնակարգերը:

9. ՀՖՖ-ի մարմինները և պաշտոնատար անձինք իրենց գործունեության ընթացքում պարտավոր են առաջնորդվել ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի կանոնադրություններով, կանոնակարգերով, շրջաբերականներով և որոշումներով, ինչպես նաև ՖԻՖԱ-ի Վարքագծի կանոններով:

10. ՀՖՖ-ն չեզոք է քաղաքական և կրոնական հարցերում: Արգելվում է խտրականության որևէ դրսևորում՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, ազգային փոքրամասնության պատկանելիությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից: Խտրականության որևէ դրսևորում պատժելի են անդամության կասեցմամբ, հեռացմամբ կամ սույն կանոնադրությամբ և ՀՖՖ կանոնակարգերով նախատեսված այլ միջոցներով:

11. ՀՖՖ-ն գործում է ՀՀ ողջ տարածքում, ինչպես նաև օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

12. ՀՖՖ-ի գտնվելու վայրն է՝ ՀՀ, քաղաք Երևան, Խանջյան 27:

13. ՀՖՖ-ի անվանումն է՝

Հայերեն լրիվ՝ «**Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա**» իրավաբանական անձանց միություն  
Հայերեն կրճատ՝ **Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա**

Հայերեն հապավումը՝ **ՀՖՖ**

Անգլերեն լրիվ՝ **“Football Federation of Armenia” union of legal persons**

Անգլերեն կրճատ՝ **“Football Federation of Armenia”**

Անգլերեն հապավումը՝ **FFA**

14. ՀՖՖ-ի խորհրդանշանն է (լոգոն)՝ կարմիր, կապույտ և նարնջագույն գույների համադրմամբ կլոր շրջան, որի ստորին նարնջագույն հատվածի մասում հայերեն մեծատառերով գրված է ՀՖՖ: Շրջանի մնացած կարմիր հատվածի արտաքին մասում՝ ձախից աջ, սպիտակ գույնի անգլերեն մեծատառերով շրջանաձև գրված է **Football Federation of Armenia**: Շրջանի ստորին մասում Արարատ լեռան գծապատկերն է, որի գագաթներից վերև կապույտ գույնով գծապատկերված է ֆուտբոլի գնդակ:

15. ՀՖՖ-ի կառավարման մարմինների աշխատանքային լեզուն հայերենն է, իսկ եթե նիստին հրավիրված անձը ելույթ է ունենում օտար լեզվով, ապա ապահովվում է դրա հայերեն թարգմանությունը կամ նիստի մասնակիցներին նախապես բաժանվում է համապատասխան ելույթի հայերեն տեքստը: Տարբեր լեզուներով գրված տեքստերի մեկնաբանությունից ծագած որևէ անհամապատասխանության դեպքում հայերեն գրված տեքստը համարվում է որոշիչ:

16. ՀՖՖ-ի դրոշմը միագույն է՝ սպիտակ ուղղանկյունաձև կտրվածքով, կենտրոնում՝ ՀՖՖ-ի լոգոն: Դրոշմի լայնության և երկարության չափերի հարաբերակցությունն է՝ 1:2:

### III. ՀՖՖ-ի ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

#### 1. ՀՖՖ-ի նպատակներն են՝

- 1) ղեկավարվելով ազնիվ խաղի սկզբունքներով՝ զարգացնել ֆուտբոլ խաղը ՀՀ-ում, բարձրացնել դրա դերը՝ անձի բազմակողմանի և ներդաշնակ զարգացմանը նպաստելու համար, հետևողականորեն մոտեցնել հայկական ֆուտբոլի մակարդակը միջազգային չափանիշներին, ամրապնդել միջազգային մարզական հարաբերությունները ֆուտբոլ խաղի ասպարեզում,
- 2) պաշտպանել իր անդամների իրավունքները և օրինական շահերը:

#### 2. ՀՖՖ-ի խնդիրներն են (գործունեության առարկան է)՝

- 1) զարգացնել և ամրապնդել կապերն արտերկրյա ֆուտբոլի ֆեդերացիաների, կոնֆեդերացիաների, ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի հետ,
- 2) ապահովել գործնական հարաբերություններ ֆուտբոլային ակումբների, մասնկապատանեկան մարզադպրոցների, մասնագետների ու մարզիկների հետ,
- 3) մշակել և իրագործել Հանրապետությունում ֆուտբոլ խաղի զարգացման ընթացիկ և հեռանկարային ծրագրեր,
- 4) ՀՀ-ում կազմակերպել ֆուտբոլային միջոցառումներ, մրցաշարեր, մրցումներ և հստակեցնել ֆուտբոլի հանրապետական առաջնության տարբեր խմբերի, գավաթի խաղարկության և այլ մրցաշարերի կառուցվածքը, կանոնակարգը, օրացույցը,
- 5) ՀՀ տարածքում կազմակերպել և անցկացնել հանրապետական և միջազգային մրցախաղեր, վերահսկել ՀՀ-ում անցկացվող ընկերական բոլոր խաղերը,
- 6) բարելավել բարձրակարգ մարզիկների պատրաստման համակարգը, ապահովել հավաքական թիմերի և ակումբների պատշաճ մրցելույթներ միջազգային մրցաշարերում,
- 7) անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել ֆուտբոլ խաղի մասնագետների և մրցավարների որակավորումը բարձրացնելու համար,
- 8) կազմակերպել մարզչական կադրերի և այլ մասնագետների ընտրություն՝ ՀՀ հավաքական թիմերում աշխատելու համար,
- 9) ուսումնասիրել հայրենական և արտերկրյա ֆուտբոլային ավանդույթներն ու փորձը, գիտամեթոդական նվաճումները և դրանք կիրառել գործնական աշխատանքներում,
- 10) ապահովել ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի կանոնադրություններին, կանոնակարգերին և որոշումներին համապատասխան գործունեություն, կանխել խախտումները, ինչպես նաև ոչ մարզական արարքները և չարաշահումները,
- 11) ապահովել մարզիկների, մարզիչների և այլ մասնագետների սոցիալական պաշտպանվածությունը, հոգատարություն ցուցաբերել հայկական ֆուտբոլի վետերանների նկատմամբ,
- 12) օրենսդրությամբ սահմանված կարգով հրատարակել և լուսաբանել ֆուտբոլին վերաբերող իրադարձություններն ու նորությունները, հրատարակել գիտամեթոդական ձեռնարկներ,

13) իրականացնել իր կանոնադրական նպատակներին համապատասխան և օրենքով չարգելված այլ գործունեություն:

#### IV. ՀՖՖ-ի ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. ՀՖՖ-ի իրավունակությունը ծագում է ՀՀ արդարադատության նախարարության կողմից իր պետական գրանցման պահից և դադարում լուծարման ավարտի պահին:

2. ՀՖՖ-ն ունի իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքները և կրում է համապատասխան պարտականություններ: ՀՖՖ-ն ունի սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության նպատակներին համապատասխանող քաղաքացիական իրավունքներ և կրում է այդ գործունեության հետ կապված պարտականություններ:

3. ՀՖՖ-ն իր քաղաքացիական իրավունքները և դրանց պաշտպանությունն իրականացնում է իր հայեցողությամբ: ՀՖՖ-ի կողմից այդ իրավունքներից հրաժարվելը չի հանգեցնում դրանց դադարեցման, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

4. ՀՖՖ-ն՝

- 1) որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով,
- 2) կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ,
- 3) կարող է հանդես գալ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով որպես հայցվոր կամ պատասխանող ընդհանուր իրավասության և արբիտրաժային դատարաններում,
- 4) ունի ինքնուրույն հաշվեկշիռ,
- 5) ունի իր հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանումով և խորհրդանշանով կլոր կնիք, դրոշմ, ձևաթղթեր, հաշվարկային հաշիվ բանկերում՝ ՀՀ արժույթով և արտարժույթով:

5. ՀՖՖ-ն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

- 1) ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար ստեղծել տնտեսական ընկերություններ կամ դառնալ դրանց մասնակից, ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած եղանակով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, ինչպես նաև տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը,
- 2) ինքնուրույն գոյացնել իր ֆինանսական միջոցները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, ստանալ վարկեր,
- 3) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագրեր և կրել պարտավորություններ,
- 4) ինքնուրույն ընտրել իր արտաքին գործունեության վարման կարգը,
- 5) ինքնուրույն ծրագրել իր գործունեությունը,
- 6) հիմնադրել լրատվական միջոցներ և զբաղվել պարբերական հրատարակչական գործունեությամբ,

- 7) կազմակերպել ցուցահանդեսներ, անցկացնել մարզական և այլ միջոցառումներ, ծավալել հովանավորչական գործունեություն,
- 8) անհրաժեշտության դեպքում ֆուտբոլի հանրապետական առաջնության կազմակերպման և անցկացման իրավունքները տրամադրել նոր կազմավորվող պրոֆեսիոնալ ֆուտբոլային լիգային, որն ընդունում և անշեղորեն ղեկավարվում է ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի կանոնադրություններով,
- 9) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իր անդամների իրավունքները և օրինական շահերը ներկայացնել ու պաշտպանել այլ կազմակերպություններում, ընդհանուր իրավասության և արբիտրաժային դատարաններում, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում,
- 10) ճանաչել անկախ և անկողմնակալ արբիտրաժային դատարան, որն իրավասու կլինի որպես վերջին աստյան քննելու և որոշում կայացնելու ՀՖՖ-ի, ՀՖՖ անդամների, Ֆուտբոլիստների, պաշտոնատար անձանց, մրցախաղի և Ֆուտբոլիստների ներկայացուցիչների միջև առաջացած ցանկացած վեճերի կապակցությամբ՝ բացառելով նման վեճերի քննումն ընդհանուր իրավասության դատարաններում,
- 11) ՀՖՖ-ն ունի օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

6. ՀՖՖ-ն հանդիսանում է ՈւԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի կողմից սահմանված կարգով միջազգային, ինչպես նաև ազգային և իր իրավասության ներքո անցկացվող այլ ֆուտբոլային խաղերի կազմակերպումից և անցկացումից բխող բոլոր իրավունքների բացառիկ սեփականատերը: Այդ իրավունքներն ի թիվս այլոց ներառում են բոլոր տեսակի ռադիոհեռուստատեսային (աուդիովիզուալ) և հնարավոր բոլոր այլ միջոցներով հեռարձակման, առևտրային գովազդի և շուկայավարման իրավունքները,

7. ՀՖՖ-ն բացառիկ իրավասություն ունի ՖԻՖԱ-ի Ֆուտբոլիստների Կարգավիճակի և Տեղափոխությունների կանոնակարգի դրույթներին համապատասխան ազգային մակարդակով կանոնակարգել ֆուտբոլիստների կարգավիճակը և տեղափոխությունները, ինչպես նաև ցանկացած միջազգային տեղափոխության պարագայում՝ տրամադրելու միջազգային տրանսֆերային սերտիֆիկատներ և իրականացնելու այդ նպատակով սահմանված այլ գործառույթներ:

8. ՀՖՖ-ի իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով սահմանված կարգով:

9. ՀՖՖ-ն քաղաքացիական իրավունքները ձեռք է բերում ու իրականացնում իր կամքով և ի շահ իրեն:

10. ՀՖՖ-ն ազատ է պայմանագրերի հիման վրա սահմանելու իր իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

11. ՀՖՖ-ն ունի օրենքով չարգելված բոլոր եղանակներով իր քաղաքացիական իրավունքների պաշտպանության իրավունք:

12. ՀՖՖ-ն բացառիկ իրավասություններ ունի իր անվանման, լոգոյի և օրենքով սահմանված կարգով գրանցված այլ խորհրդանիշների և բնութագրիչների օգտագործման նկատմամբ:

13. ՀՖՖ-ն պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական և գույքի օգտագործման մասին հաշվետվությունները, ՀՀ արդարադատության նախարարություն անհապաղ ներկայացնել

իրավաբանական անձանց միասնական պետական գրանցամատյանում գրանցվող բոլոր այն տվյալները, որոնք փոփոխության են ենթարկվել:

## V. ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՖՖ-ին, ՀՖՖ-ին ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ՀՖՖ-ից ԴՈՒՐՄ ԳԱԼՈՒ ԵՎ ՀԵՌԱՑՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. ՀՖՖ-ի անդամ կարող են դառնալ ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ ունեցող ֆուտբոլային ակումբները և ֆուտբոլ խաղի զարգացմանը նպաստող, ֆուտբոլին առնչվող ցանկացած այլ ոչ առևտրային կազմակերպություն, որը զբաղվում է ֆուտբոլի տարբեր ճյուղերի (դպրոցական, կանանց, ֆուտզալ, լողափնյա ֆուտբոլ և այլն) զարգացմամբ կամ ֆուտբոլին առնչվող տարբեր գործառույթներով (աջակցության, մարզչական, մրցավարական, սպորտային բժշկության, Ֆուտբոլիստների շահերի պաշտպանության, խաղերի կազմակերպման, Ֆուտբոլիստների գործակալների պատրաստման և նրանց շահերի պաշտպանության և այլն):

ՀՖՖ անդամներն են՝

- 1) ֆուտբոլային ակումբներ – 15
- 2) ֆուտբոլի դպրոց – 1
- 3) կանանց և ֆուտզալի ասոցիացիա

2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 125–րդ հոդվածում համապատասխան լրացում կատարելու դեպքում ՀՖՖ-ի անդամ կարող են դառնալ նաև առևտրային կազմակերպությունները:

3. ՀՖՖ-ի անդամագրման, անդամության կասեցման և հեռացման մասին որոշումները կայացնում է Ժողովը:

4. ՀՖՖ-ին անդամագրվելու համար կազմակերպությունը գրավոր դիմում է ներկայացնում ՀՖՖ-ի Գործադիր տնօրենին: Դիմումը բովանդակում է հայտարարություն, որտեղ թեկնածուն պարտավորվում է անվերապահորեն կատարել ՀՖՖ-ի կանոնադրության, կանոնակարգերի, շրջաբերականների և որոշումների պահանջները, բարձր պահել ՀՖՖ-ի հեղինակությունը:

5. Անդամագրվելու համար յուրաքանչյուր դիմումին կցվում է՝

- 1) դիմողի կանոնադրությունը և կանոնակարգերը,
- 2) իր անդամների վերջին ժողովի արձանագրության պատճենը,
- 3) դիմողի պաշտոնատար անձանց ցուցակը, որոնք իրավունք ունեն առանց լիազորագրի հանդես գալու ընկերության անունից,
- 4) հայտարարություն այն մասին, որ դիմող կազմակերպության գտնվելու վայրը ՀՀ-ում է,
- 5) հայտարարություն այն մասին, որ բոլոր պաշտոնական խաղերն անցկացվում են ՀՖՖ-ի իրավասության ներքո,
- 6) հայտարարություն այն մասին, որ դիմողը կարող է ինքնուրույն որոշում կայացնել, ՀՖՖ-ին անդամագրվելու համար,
- 7) հայտարարություն այն մասին, որ դիմողը պարտավորվում է ճանաչել Ժողովի կողմից օրենքով սահմանված կարգով ճանաչված արբիտրաժային դատարանի

իրավասությունը, ինչպես նաև ԿԱՍ-ի իրավասությունը՝ ՖԻՖԱ-ի և ՈԻԵՖԱ-ի կանոնադրությունների դրույթներին համապատասխան,

- 8) հայտարարություն այն մասին, որ դիմողը համաձայն է ղեկավարվել ՖԻՖԱ-ի, ՈԻԵՖԱ-ի և ՀՖՖ-ի գործող կանոնադրություններով, կանոնակարգերով, շրջափերականներով, հրահանգներով և որոշումներով,
- 9) հայտարարություն այն մասին, որ դիմողը երաշխավորում է, որ վերոնշյալ դրույթները կպահպանվեն նաև իր անդամների և ցանկացած այլ անձի կողմից (Ֆուտբոլիստ, պաշտոնատար անձ և այլն), որի հետ նա ունի աշխատանքային կամ հանձնարարության պայմանագիր ,
- 10) հայտարարություն այն մասին, որ դիմողն ընդունում է ՀՖՖ-ի իրավական մարմինների իրավասությունը իր կամ իր անդամներից որևէ մեկի վերաբերյալ ծագած իրավական վեճերի լուծման նկատմամբ,
- 11) հայտարարություն այն մասին, որ դիմողը պարտավորվում է կազմակերպել ընկերական խաղեր կամ մասնակցել ընկերական խաղերին միայն ՀՖՖ-ի հետ նախապես համաձայնեցնելուց հետո:

6. ՀՖՖ-ին անդամագրված կազմակերպությունը ՀՖՖ-ի մյուս անդամների հետ համատեղ նյութական պատասխանատվություն է կրում ՀՖՖ-ի պարտավորությունների համար՝ իր կողմից մուծվելիք 1 տարվա անդամավճարի չափով:

7. Կազմակերպության անդամությունը ՀՖՖ-ում դադարեցվում է, եթե անդամն անդամության դադարեցման օրվանից առնվազն 6 ամիս առաջ գրավոր դիմում է ներկայացնում ՀՖՖ-ի Գործադիր տնօրենին: Դադարեցման մասին որոշումն ուժի մեջ է մտնում ֆինանսական տարվա վերջում, այն դեպքում, եթե դիմումատուն կատարել է իր բոլոր ֆինանսական պարտավորությունները ՀՖՖ-ի և ՀՖՖ-ի մյուս անդամների նկատմամբ:

8. ՀՖՖ-ի Գործադիր կոմիտեն իր անդամների ձայների մեծամասնությամբ կարող է ՀՖՖ-ի անդամությունից հեռացնելու մասին առաջարկություն ներկայացնել Ժողովին, եթե ՀՖՖ-ի անդամը կոպտորեն և/կամ բազմակի անգամ խախտել է ՖԻՖԱ-ի, ՈԻԵՖԱ-ի կամ ՀՖՖ-ի կանոնադրություններով, կանոնակարգերով, շրջափերականներով և որոշումներով նախատեսված իր պարտավորությունները:

9. Հեռացվող անդամը (նրա ներկայացուցիչը) իրավունք ունի քվեարկությունից առաջ արտահայտելու իր տեսակետը հեռացման հարցի վերաբերյալ:

10. ՀՖՖ-ից հեռացված անդամի նկատմամբ կիրառվում են ՀՖՖ-ից դուրս գալուն վերաբերող կանոնները՝ իր պարտավորությունների մասով:

11. Գործադիր կոմիտեն իրավասու է անմիջապես կասեցնելու ՀՖՖ-ի անդամի անդամությունը, եթե տվյալ անդամը կոպտորեն և/կամ բազմակի անգամ խախտել է ՖԻՖԱ-ի, ՈԻԵՖԱ-ի կամ ՀՖՖ-ի կանոնադրություններով, կանոնակարգերով, շրջափերականներով և որոշումներով նախատեսված իր պարտավորությունները: Կասեցումը վավեր է ոչ ավել, քան մինչև հաջորդ ժողովի օրը: Այդ ընթացքում, Գործադիր կոմիտեն կարող է չեղյալ հայտարարել կասեցումը:

12. Եթե կասեցումը նախքան ժողովը չեղյալ չի հայտարարվում, ապա պատվիրակները ժողովի ընթացքում որոշում են կայացնում կասեցումը չեղյալ հայտարարելու կամ մինչև հաջորդ ժողովը երկարաձգելու մասին, որի ժամանակ որոշում է կայացվում ՀՖՖ-ից համապատասխան անդամի հեռացման մասին:

13. Այն անդամը, որի անդամությունը կասեցվել է, գրկվում է անդամության իր բոլոր իրավունքներից՝ բացառությամբ առանց քվեարկելու իրավունքի ժողովին մասնակցելուց: Այդ անդամը շարունակում է կրել անդամության հետ կապված իր պարտականությունները:

## VI. ՀՖՖ-ի ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՀՖՖ-ի անդամն իրավունք ունի՝

- 1) առաջադրել թեկնածուներ ՀՖՖ Նախագահի և Գործադիր կոմիտեի անդամների ընտրություններում,
- 2) ՀՖՖ-ի աշխատանքները բարելավելու նպատակով նրա ղեկավար մարմիններին ներկայացնել դիմումներ, բողոքներ և առաջարկություններ,
- 3) սպառիչ տեղեկություններ ստանալ ՀՖՖ-ի գործունեության մասին,
- 4) ՀՖՖ-ից ստանալ իրավական օգնություն և իր օրինական շահերի պաշտպանության համար օժանդակություն,
- 5) մասնակցել ժողովին և ՀՖՖ-ի կողմից կազմակերպված միջոցառումներին,
- 6) ներկայացնել Ժողովի օրակարգում հարց ընդգրկելու առաջարկ: Այդ առաջարկությունը գրավոր ներկայացվում է Գործադիր տնօրենին ժողովից առնվազն 20 օր առաջ,
- 7) դադարեցնել անդամությունը ՀՖՖ-ում ֆինանսական տարվա ավարտին,
- 8) ունենալ օրենսդրությամբ և ՖԻՖԱ-ի, ՈւԵՖԱ-ի և ՀՖՖ-ի կանոնադրություններով և կանոնակարգերով սահմանված այլ իրավունքներ:

2. ՀՖՖ-ի անդամը պարտավոր է՝

- 1) նպաստել ՀՖՖ-ի հեղինակության բարձրացմանը,
- 2) կատարել ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի և ՈւԵՖԱ-ի կանոնադրությունների, կանոնակարգերի և շրջաբերականների պահանջները, ղեկավար մարմինների որոշումները,
- 3) ապահովել իր գործադիր մարմնի ընտրությունների ազատ անցկացումը՝ իր կանոնադրությամբ սահմանված կարգով,
- 4) աջակցել ՀՖՖ-ի անդամության համալրմանը,
- 5) մուծել մուտքավճար՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով և տարեկան անդամավճար՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով,
- 6) ապահովել իր անդամների կողմից ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի, ՈւԵՖԱ-ի և իր կանոնադրությունների, կանոնակարգերի և շրջաբերականների, ինչպես նաև իրավասու մարմինների որոշումների կատարումը,
- 7) ՀՖՖ ներկայացնել իր կանոնադրության լրացումները և փոփոխությունները, ինչպես նաև առանց լիազորագրի ընկերության անունից հանդես գալու իրավունք ունեցող պաշտոնատար անձանց ցուցակում կատարված փոփոխությունները,
- 8) առաջնորդվել ԻՖԱԲ-ի Խաղի կանոններով և երաշխավորել դրանց կատարումը նաև իր անդամների կողմից,
- 9) ճանաչել ԿԱՍ-ի իրավասությունը և իրենց կանոնադրությունում նախատեսել դրույթ, համաձայն որի, իր կամ իր անդամների մասնակցությամբ ցանկացած արբիտրաժային լուծում պահանջող վեճ, որը բխում է ՖԻՖԱ-ի և ՈւԵՖԱ-ի կանոնադրություններից, կանոնակարգերից, հրահանգներից և որոշումներից՝ ենթակա է լուծման բացառապես ԿԱՍ-ի կողմից՝ ՖԻՖԱ-ի և ՈւԵՖԱ-ի կանոնադրություններին համապատասխան՝ առանց ընդհանուր իրավասության դատարաններ դիմելու իրավունքի: ԿԱՍ-ը, սակայն, չի քննում որևէ ասոցիացիայի կամ կոնֆեդերացիայի կողմից՝ սահմանված կարգի

համաձայն ճանաչված անկախ արբիտրաժային դատարանի կայացրած որոշումների դեմ բողոքները,

- 10) ճանաչել ՀՖՖ-ի կողմից ճանաչված արբիտրաժային դատարանը և կանոնադրությունում նախատեսել դրույթ, համաձայն որի, իր կամ իր անդամների մասնակցությամբ ցանկացած արբիտրաժային լուծում պահանջող վեճ, որը բխում է ՀՖՖ-ի կանոնադրությունից, կանոնակարգերից, հրահանգներից և որոշումներից՝ ենթակա է լուծման ՀՖՖ-ի կողմից ճանաչված արբիտրաժային դատարանի կողմից, և արգելվում է ընդհանուր իրավասության դատարաններ դիմելը, բացառությամբ երբ դա արգելված է ՀՀ օրենսդրությամբ,
- 11) երաշխավորել, որ իր Ֆուտբոլիստները, պաշտոնատար անձինք և Ֆուտբոլիստների արտոնագրված գործակալները և խաղերի գործակալները կրում են սույն կետի 2-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ ենթակետերով սահմանված պարտավորությունները,
- 12) չանդամագրվել այլ մարզական կառույցի՝ առանց ՀՖՖ-ի Գործադիր կոմիտեի նախնական համաձայնության,
- 13) վճարել մուտքավճարը՝ ՀՖՖ-ի անդամ դառնալու մասին Ժողովի որոշման կայացումից հետո 10 օրվա ընթացքում,
- 14) ՀՖՖ-ի անդամները տարեկան անդամավճարը մուծում են մինչև տվյալ տարվա հունվարի 31-ը:
- 15) սույն կետի 13-րդ և 14-րդ ենթակետերում նշված ժամկետների խախտման դեպքում՝ ՀՖՖ-ի անդամը յուրանքանչյուր ամսվա համար մուծումն ուշացնելու դեպքում վճարում է տուգանք՝ ժամկետին չմուծված գումարի 2 տոկոսի չափով:

3. Սույն կանոնադրությամբ սահմանված պարտավորությունները չկատարելու կամ անբավարար կատարելու դեպքում ՀՖՖ-ի անդամը փոխհատուցում է դրա հետևանքով ՀՖՖ-ին պատճառված վնասները: Փոխհատուցման ենթակա չեն անուղղակի վնասներն ու բաց թողնված օգուտները:

## VII. ՀՖՖ-ի ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

1. ՀՖՖ-ի կառավարման մարմիններն են.
  - 1) Ժողովը
  - 2) Գործադիր կոմիտեն
  - 3) Նախագահը
  - 4) Գործադիր տնօրենը
  - 5) իրավական մարմինները:
2. ՀՖՖ-ի խորհրդակցական մարմիններն են.
  - 1) մշտական կոմիտեները
  - 2) ժամանակավոր կոմիտեները:

## VIII. ԺՈՂՈՎԸ

1. ՀՖՖ-ի բարձրագույն մարմինը ՀՖՖ-ի անդամների ներկայացուցիչների (պատվիրակների) ժողովն է (այսուհետ՝ Ժողով): Ժողովն իրավասու է լուծելու ՀՖՖ-ի կառավարման և գործունեության հետ կապված ցանկացած հարց:

2. Ժողովը կարող է լինել հերթական կամ արտահերթ: Ժողովն իրավասու չէ որոշում կայացնելու օրակարգում չընդգրկված որևէ հարցի վերաբերյալ: Ժողովի վարման, այդ թվում՝ ընտրությունների անցկացման կարգը կանոնակարգվում է Ժողովի աշխատակարգով, որն ընդունվում է Ժողովի կողմից:

3. ՀՖՖ-ի յուրաքանչյուր անդամ ժողովում ներկայացվում է երեք պատվիրակով, որոնցից յուրաքանչյուրն ունի ձայնի իրավունք: Ժողովի պատվիրակները քվեարկում են անձամբ: Լիազորագրով կամ նամակով քվեարկությունն արգելվում է, և որևէ պատվիրակ չի կարող ներկայացնել ՀՖՖ-ի ավելի քան մեկ անդամի:

4. Ժողովի պատվիրակներին ընտրում են ՀՖՖ-ի անդամները՝ իրենց կանոնադրությամբ սահմանված կարգով: ՀՖՖ-ի անդամները ժողովի պատվիրակների հաստատված ցուցակները ՀՖՖ ներկայացնում են ոչ ուշ, քան ժողովից 15 օր առաջ:

5. Ժողովին առանց քվեարկելու իրավունքի կարող են մասնակցել ՀՖՖ-ի անդամ չհանդիսացող հետևյալ կազմակերպությունների ներկայացուցիչները՝

- 1) ֆուտբոլիստների միությունը
- 2) մարզիչների միությունը
- 3) մրցավարների միությունը
- 4) խաղերի տեսուչների միությունը:

Սույն կետում նշված յուրաքանչյուր կազմակերպությունից ժողովին կարող է մասնակցել մեկական ներկայացուցիչ: Նրանք կարող են հարցեր տալ և ելույթ ունենալ միայն ժողովի որոշմամբ:

6. Գործադիր կոմիտեի և/կամ Նախագահի որոշմամբ Ժողովին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են հրավիրվել նաև այլ անձինք:

7. Նախագահը, Գործադիր կոմիտեի անդամները և գործադիր տնօրենը Ժողովին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով: Իրենց պաշտոնավարման ընթացքում նրանք չեն կարող որպես պատվիրակ ընտրվել ՀՖՖ-ի որևէ անդամի կողմից:

8. Ժողով հրավիրում է Գործադիր կոմիտեն, որը Ժողովի անցկացման օրվանից 30 օր առաջ ՀՖՖ-ի անդամներին ծանուցում է Ժողովի գումարման վայրի, օրվա և ժամի մասին: Գործադիր կոմիտեն Ժողովի անցկացման օրվանից 10 օր առաջ Ժողովի պատվիրակներին ներկայացնում է Ժողովի օրակարգի նախագիծը և համապատասխան նյութերը:

9. Ժողովն իրավագոր է, եթե Ժողովին ներկա է սահմանված կարգով ընտրված Ժողովի պատվիրակների ընդհանուր թվի կեսից ավելին: Եթե նշված քվորումը բացակայում է, ապա նախագահողը պետք է հայտարարի այդ մասին և փակի Ժողովը: Ժողովն ավտոմատ կերպով գումարվում է չկայացած Ժողովի հաջորդ օրը՝ նույն վայրում, նույն ժամին և նույն օրակարգով: Այդ դեպքում սահմանված քվորում չի պահանջվում, եթե Ժողովի օրակարգում ընդգրկված չեն հետևյալ հարցերը.

- 1) ՀՖՖ-ի կանոնադրության լրացումներ և փոփոխություններ,
- 2) Նախագահի ընտրություն կամ պաշտոնանկություն,
- 3) Գործադիր կոմիտեի անդամների ընտրություն կամ պաշտոնանկություն,
- 4) ՀՖՖ-ի մարմնի կազմալուծում,
- 5) ՀՖՖ-ի անդամի հեռացում կամ անդամության կասեցում,
- 6) ՀՖՖ-ի լուծարում կամ վերակազմակերպում:

10. Ժողովը վարում է Նախագահը, նրա հանձնարարությամբ՝ փոխնախագահը, իսկ, դրա անհնարինության դեպքում, Գործադիր կոմիտեի որոշմամբ՝ Գործադիր կոմիտեի անդամը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ Գործադիր կոմիտեի տարիքով ավագ անդամը, իսկ դրա

անհնարինության դեպքում՝ նախագահողն ընտրվում է Ժողովի կողմից՝ ներկա պատվիրակների թվից:

11. Ժողովը գումարվում է ՀՖՖ-ի նստավայրում, եթե առկա չէ այն այլ վայրում անցկացնելու մասին Գործադիր կոմիտեի որոշում:

12. Ժողովի օրակարգի նախագիծը կազմվում է Նախագահի և Գործադիր կոմիտեի անդամների կողմից իրենց իրավասությունների շրջանակներում նախապես առաջարկվող հարցերից: Ժողովի օրակարգի նախագիծը և համապատասխան նյութերը Գործադիր տնօրենը տրամադրում է Ժողովի պատվիրակներին՝ Ժողովի անցկացման օրվանից առնվազն 10 օր առաջ:

13. Հերթական ժողովն անցկացվում է տարին մեկ անգամ՝ ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում: Հերթական ժողովի օրակարգի նախագծում, սույն գլխի 12-րդ և 14-րդ կետերում նշված հարցերից բացի, պարտադիր ընդգրկվում են հետևյալ հարցերը՝ ստորև բերվող հերթականությամբ.

- 1) Ժողովին մասնակցող պատվիրակների լիազորությունների ճանաչում (այն առանց քվեարկության ընդունվում է ի գիտություն),
- 2) օրակարգի հաստատում,
- 3) Նախագահի ուղերձ,
- 4) հաշվիչ հանձնաժողովի ընտրություն,
- 5) նիստի արձանագրության հաստատման համար պատվիրակների ընտրություն,
- 6) Նախագահի գործունեության հաշվետվություն, որն ընդունվում է ի գիտություն,
- 7) ՀՖՖ-ի անդամների անդամության կասեցում կամ հեռացում (անհրաժեշտության դեպքում),
- 8) նախորդ ֆինանսական տարվա հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական հաշվետվության հաստատում,
- 9) անկախ աուդիտորի զեկույց, որն ընդունվում է ի գիտություն,
- 10) հաջորդ ֆինանսական տարվա բյուջեի հաստատում,
- 11) Նախագահի ընտրություն կամ պաշտոնանկություն (անհրաժեշտության դեպքում),
- 12) Գործադիր կոմիտեի անդամների ընտրություն կամ պաշտոնանկություն (անհրաժեշտության դեպքում),
- 13) Գործադիր կոմիտեի ներկայացմամբ՝ անկախ աուդիտորի նշանակում,
- 14) ՀՖՖ-ի կանոնադրության կամ Ժողովի աշխատակարգի նոր խմբագրության, փոփոխությունների և լրացումների հաստատում (անհրաժեշտության դեպքում),
- 15) ՀՖՖ-ի նոր անդամների ընդունում (անհրաժեշտության դեպքում),
- 16) ՀՖՖ-ի անդամների և Գործադիր կոմիտեի առաջարկությունների քննարկում:

14. Ժողովի օրակարգի նախագծում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություն կարող են ներկայացնել Ժողովի պատվիրակները. այդ մասին Գործադիր տնօրենը պետք է ծանուցվի Ժողովից առնվազն 5 օր առաջ: Ստացված առաջարկությունը պետք է փոխանցվի Ժողովի պատվիրակներին, և այն հաստատվում է, եթե դրան կողմ է քվեարկել Ժողովին ներկա պատվիրակների առնվազն 2/3-ը:

15. Ժողովի նիստերն արձանագրվում են, ստորագրվում Ժողովի նախագահի և քարտուղարի կողմից և ուղարկվում ՀՖՖ-ի անդամներին՝ հաստատվելուց հետո առնվազն մեկ ամսվա ընթացքում: ՀՖՖ-ի անդամների կողմից Ժողովի արձանագրության ստացման օրվանից մեկամսյա ժամկետում Գործադիր տնօրենին գրավոր առարկություն չներկայացնելու դեպքում այն համարվում է հաստատված, իսկ հակառակ պարագայում՝ այն ներկայացվում է հաջորդ Ժողովի քննարկմանը:

16. Արտահերթ ժողով կարող է հրավիրվել ՀՖՖ-ի անդամների առնվազն 1/3-ի գրավոր պահանջով կամ Նախագահի կամ Գործադիր կոմիտեի նախաձեռնությամբ:

17. Արտահերթ ժողով հրավիրելու համար ՀՖՖ-ի անդամների 1/3-ը պետք է գրավոր դիմում ներկայացնի ՀՖՖ Գործադիր տնօրենին՝ կցելով արտահերթ ժողովի օրակարգի նախագիծը, հիմնավորումները և համապատասխան նյութերը: Դիմումն ստորագրում են անդամ կազմակերպության իրավասու անձինք և հաստատում կնիքով: Դիմումը ստանալուց հետո Գործադիր կոմիտեն երկու ամսվա ընթացքում հրավիրում է արտահերթ ժողով՝ օրակարգում առնվազն ընդգրկելով անդամների կողմից ներկայացված հարցերը: Նշված ժամկետում արտահերթ ժողով չհրավիրելու դեպքում՝ դիմումը ստորագրած անդամներն իրենց նախաձեռնությամբ, ՀՖՖ-ի կանոնադրությամբ սահմանված կարգով և ներկայացված օրակարգով հրավիրում են արտահերթ ժողով՝ այդ մասին անհապաղ գրավոր ծանուցելով ՖԻՖԱ-ին և ՈԻԵՖԱ-ին: Արտահերթ ժողովի որոշված օրակարգը փոփոխման ենթակա չէ: Արտահերթ ժողովում հարցերը քննարկվում և որոշումներն ընդունվում են հերթական ժողովի համար սահմանված կարգով:

18. Ժողովը իր բացառիկ իրավասությունների շրջանակներում՝

- 1) հաստատում է ՀՖՖ-ի կանոնադրությունը և Ժողովի աշխատակարգը, ինչպես նաև դրանցում կատարված փոփոխությունները և լրացումները,
  - 2) հաստատում է ֆուտբոլ խաղի զարգացման երկարաժամկետ հեռանկարային ծրագրերը,
  - 3) ի գիտություն է ընդունում Նախագահի և Գործադիր տնօրենի հաշվետվությունները,
  - 4) ընտրում կամ պաշտոնանկ է անում Նախագահին,
  - 5) ընտրում կամ պաշտոնանկ է անում Գործադիր կոմիտեի անդամներին,
  - 6) հաստատում է Ժողովի օրակարգի նախագիծը,
  - 7) նշանակում է Ժողովի արձանագրությունը ստուգելու համար պատվիրակներ,
  - 8) ընտրում է հաշվիչ հանձնաժողով,
  - 9) հաստատում է նախորդ Ժողովի արձանագրությունը, եթե ներկայացվել են առարկություններ,
  - 10) հաստատում է հաշվապահական հաշվեկշիռը և ֆինանսական հաշվետվությունը,
  - 11) հաստատում է հաջորդ տարվա բյուջեն,
  - 12) Գործադիր կոմիտեի առաջարկությամբ նշանակում է անկախ աուդիտոր,
  - 13) սահմանում է անդամավճարի չափը,
  - 14) ընդունում է ՀՖՖ-ի նոր անդամներ, երկարաձգում կամ դադարեցնում է կասեցումները կամ հեռացնում ՀՖՖ-ի անդամին,
  - 15) որոշում է կայացնում ՀՖՖ-ի վերակազմակերպման կամ լուծարման մասին,
  - 16) ստեղծում է ՀՖՖ-ի կառուցվածքային միավորներ, առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ), հիմնարկներ և տնտեսական ընկերություններ,
  - 17) ի գիտություն է ընդունում Նախագահի կամ Գործադիր կոմիտեի այլ անդամի հրաժարականը,
  - 18) Գործադիր կոմիտեի առաջարկությամբ շնորհում է «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի պատվավոր անդամի» կոչում:
  - 19) իրականացնում է սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:
- Ժողովի բացառիկ իրավասությունները որևէ այլ մարմնի չեն կարող փոխանցվել:

19. Ժողովում քվեարկությունները անցկացվում են բաց կարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ կանոնադրությամբ նախատեսված է փակ գաղտնի քվեարկություն:

20. Ժողովում ընտրությունները անցկացվում են փակ գաղտնի քվեարկությամբ: Թափուր տեղերի և թեկնածուների թվի հավասարության դեպքում Ժողովն իրավասու է բաց քվեարկություն հայտարարելու:

21. Ժողովում որոշումներն ընդունվում են ժողովի պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ (50%+1): Եթե անձը ներկայացրել է հրաժարական, ապա այն ընդունվում է ի գիտություն: Եթե ժողովի կողմից ընտրված անձը խախտել է սույն կանոնադրության պահանջները և կանոնադրությամբ սահմանված կարգով նա ենթակա է հեռացման, ապա քվեարկությունն անցկացվում է փակ գաղտնի կարգով, եթե Ժողովն այլ որոշում չի ընդունել:

22. Թեկնածուն ընտրվում է քվեարկության առաջին փուլում, եթե ստացել է գրանցված վավեր ձայների բացարձակ մեծամասնությունը (50%+1): Եթե որևէ թեկնածու վերը նշված անհրաժեշտ թվով ձայներ չի ստանում, ապա անցկացվում է երկրորդ փուլ, որտեղ ընտրվում է (ընտրվում են) առավել ձայներ ստացած թեկնածուն (թեկնածուները) (պարզ մեծամասնություն): Քվեարկության վավեր արդյունք չգրանցվելու դեպքում անցկացվում է ևս մեկ քվեարկություն, որում ընտրվում է առավել ձայներ ստացած թեկնածուն: Եթե քվեարկության այս փուլում ևս վավեր արդյունք չի գրանցվում, ապա նույն թեկնածուների մասնակցությամբ հաշվիչ հանձնաժողովի կողմից իրականացվում է վիճակահանություն:

23. Եթե քվեարկվում են երկուսից ավելի թեկնածուներ մեկ թափուր տեղի համար, և նրանցից ոչ մեկն անհրաժեշտ քանակությամբ վավեր ձայներ չի ստանում, ապա հաջորդ փուլ են անցնում առավել վավեր ձայներ ստացած երկու թեկնածուները:

24. Հետևյալ հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են պատվիրակների ձայների առնվազն 2/3-ով.

- 1) կանոնադրության, Ժողովի աշխատակարգի և դրանցում կատարված փոփոխությունների և լրացումների հաստատում,
- 2) ՀՖՖ-ի վերակազմակերպման և լուծարման մասին որոշումների ընդունում:

25. Նախագահը պատասխանատու է Ժողովի բնականոն աշխատանքի համար և այդ նպատակով իրավասու է նաև սահմանափակելու անդամների ելույթների տևողությունը:

26. Արձանագրությունները վարվում, ստուգվում և հաստատվում են Ժողովի աշխատակարգի դրույթներին համապատասխան:

27. Ժողովի կողմից ընդունված որոշումներն ուժի մեջ են մտնում ընդունման պահից, եթե ժողովի կողմից այլ ժամկետ չի սահմանվում:

## IX. ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵ

1. Գործադիր կոմիտեն կազմված է.

- 1) Նախագահից,
- 2) երկու փոխնախագահից,
- 3) տասնչորս անդամից:

2. Գործադիր կոմիտեն ՀՖՖ-ի գործադիր մարմինն է, որն ազատ ընտրությունների միջոցով ընտրվում է Ժողովի կողմից 4 տարի ժամկետով: Գործադիր կոմիտեի անդամները կարող են վերընտրվել:

3. Գործադիր կոմիտեի անդամների լիազորություններն սկսվում են ընտրական ժողովի ավարտից և դադարում հաջորդ ընտրական Ժողովի ժամանակ:

4. ՀՖՖ-ի յուրաքանչյուր անդամ կարող է առաջարկել Նախագահի և Գործադիր կոմիտեի անդամի մեկական թեկնածու: ՀՖՖ-ի յուրաքանչյուր անդամ կարող է Գործադիր կոմիտեում ներկայացված լինել միայն մեկ անդամով:

5. ՀՖՖ-ի անդամներն իրենց առաջադրած թեկնածուների կենսագրությունը ներկայացնում են Գործադիր տնօրենին՝ ընտրական Ժողովից առնվազն 20 օր առաջ:

6. Նախագահ կամ Գործադիր կոմիտեի անդամ կարող է ընտրվել 25 տարին լրացած, ընտրական իրավունք ունեցող, ՀՀ-ում մշտապես բնակվող յուրաքանչյուր քաղաքացի:

7. Թեկնածուների ցուցակը ժողովից առնվազն 10 օր առաջ պաշտոնապես տրամադրվում է ՀՖՖ-ի անդամներին՝ Ժողովի օրակարգի և այլ փաստաթղթերի հետ միասին:

8. Գործադիր կոմիտեի անդամը չի կարող միաժամանակ լինել իրավական մարմիններից որևէ մեկի նախագահ կամ անդամ:

9. ՀՖՖ փոխնախագահները նշանակվում են Նախագահի առաջարկությամբ Գործադիր կոմիտեի կազմից՝ դրա առաջին նիստում:

10. Գործադիր կոմիտեն կարող է ժամանակավորապես կասեցնել իր անդամի լիազորությունները, եթե վերջինս կոպտորեն խախտել է ՖԻՖԱ-ի, ՈԻԵՖԱ-ի կամ ՀՖՖ-ի կանոնադրություններով, կանոնակարգերով, շրջաբերականներով նախատեսված իր պարտավորությունները կամ չի կատարել ՖԻՖԱ-ի, ՈԻԵՖԱ-ի կամ ՀՖՖ-ի իրավասու մարմինների կայացրած որոշումները: Կասեցումը կարող է վավեր լինել ոչ ավել, քան մինչև հաջորդ Ժողովի օրը: Այդ ընթացքում Գործադիր կոմիտեն կարող է չեղյալ հայտարարել կասեցումը:

11. Եթե Գործադիր կոմիտեն կասեցումը չեղյալ չի հայտարարել, ապա հաջորդ Ժողովը որոշում է կայացնում կասեցումը չեղյալ հայտարարելու կամ Գործադիր կոմիտեի տվյալ անդամին պաշտոնից հեռացնելու մասին:

12. Եթե Գործադիր կոմիտեի անդամի նկատմամբ կայացվել է մեղադրական դատավճիռ հանցագործություն կատարելու մեղադրանքով, ապա հաջորդ Ժողովը պետք է հեռացնի նրան Գործադիր կոմիտեի կազմից:

13. Եթե Գործադիր կոմիտեի անդամը հրաժարական է տվել կամ ի վիճակի չէ կատարել իր պարտականությունները, ապա հաջորդ Ժողովը տվյալ անդամի մանդատի մնացած ժամկետով ընտրում է փոխարինող: Եթե Գործադիր կոմիտեի անդամների կեսից ավելին հրաժարական են տվել, կամ Գործադիր կոմիտեն իրավասու չէ այդ հարցի վերաբերյալ որոշումներ ընդունել, ապա Գործադիր տնօրենի կողմից ՖԻՖԱ-ի և ՈԻԵՖԱ-ի վերահսկողության ներքո գումարվում է արտահերթ Ժողով՝ սույն կանոնադրությամբ և Ժողովի աշխատակարգով սահմանված կարգով:

14. Գործադիր կոմիտեն՝

- 1) ղեկավարում է ՀՖՖ-ի գործունեությունը,
- 2) հաշվետվություն է ներկայացնում Ժողովին կատարված աշխատանքների մասին,
- 3) ընդունում է որոշումներ Ժողովի բացառիկ իրավասությանը չվերապահված, սույն Կանոնադրությամբ չնախատեսված հարցերի վերաբերյալ, ինչպես նաև ֆորս-մաժորային իրավիճակների դեպքում,
- 4) նախապատրաստում և հրավիրում է հերթական կամ արտահերթ Ժողովները, ինչպես նաև սահմանում է Ժողովի անցկացման վայրը, օրն ու ժամը,
- 5) Նախագահի առաջարկությամբ հաստատում է Գործադիր տնօրենին, Գործադիր տնօրենի տեղակալին (տեղակալներին), կամ պաշտոնանկ է անում նրանց,
- 6) հաստատում է ՀՖՖ-ի կանոնակարգերը, այդ թվում՝ ՀՖՖ մշտական կոմիտեների և իրավական մարմինների աշխատակարգերը: Կանոնակարգերը պարունակում են յուրաքանչյուր մարմնի անդամների թիվը և որոշումներ կայացնելու իրավասությունները,
- 7) նշանակում է ՖԻՖԱ-ի և ՈԻԵՖԱ-ի կոմիտեներում ՀՖՖ-ի ներկայացուցիչներին,

- 8) նշանակում և հեռացում է ՀՖՖ-ի մշտական կոմիտեների և իրավական մարմինների նախագահներին և անդամներին,
- 9) ստեղծում է գործունեության սահմանափակ ժամկետով ժամանակավոր կոմիտե, որը զբաղվում է Գործադիր կոմիտեի կողմից սահմանված կոնկրետ խնդիրներով,
- 10) ուսումնասիրում է Գործադիր տնօրենի կողմից Ժողովին ներկայացվող ՀՖՖ-ի տարեկան հաշվապահական հաշվեկշիռը, եկամուտների և ծախսերի ու կատարողականի հաշվետվությունները, և դրանք ներկայացնում է Ժողով,
- 11) ՖԻՖԱ-ի միջազգային օրացույցին համահունչ հաստատում է ֆուտբոլի հանրապետական առաջնության, գավաթի խաղարկության և ներքին այլ մրցաշարերի կանոնակարգերը, խաղերի օրացույցները և մասնակցող թիմերի թիվը,
- 12) հաստատում է Հայաստանի ազգային հավաքական թիմերի մարզիչների և տեխնիկական անձնակազմի՝ Նախագահի կողմից առաջադրված թեկնածուներին,
- 13) կանոնակարգում է Ֆուտբոլիստների կարգավիճակի, տեղափոխության և գրանցման հետ կապված հարաբերությունները՝ համաձայն ՖԻՖԱ-ի «Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության» մասին կանոնակարգի,
- 14) հաստատում է ՀՖՖ-ում մարզիչների, բժշկական անձնակազմի, պաշտոնատար անձանց, մրցավարների, Ֆուտբոլիստների և խաղերի գործակալների գրանցման կանոնակարգը,
- 15) սահմանում է «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի պատվավոր անդամի» կոչում շնորհելու կարգը,
- 16) նախապատրաստում է Ժողովին ներկայացվող առաջարկություններ,
- 17) վերահսկում է ՀՖՖ-ի գործունեության ոլորտները,
- 18) ստեղծում է բյուջեով չնախատեսված ծախսերի համար հիմնադրամներ,
- 19) հիմնում, կազմակերպում կամ անվավեր է ճանաչում Հանրապետության մասշտաբով անցկացվող պաշտոնական մրցումները, ինչպես նաև հաստատում մասնակից թիմերի թիվը, խաղերի անցկացման վայրը և ժամանակացույցը,
- 20) ապահովում է հարաբերությունները միջազգային և ազգային մարզական մարմինների հետ, ինչպես նաև առաջադրում է իր ներկայացուցիչներին ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի տարբեր մարմինների ընտրությունների համար,
- 21) սահմանված կարգով տեղեկություններ է տրամադրում ՀՖՖ-ի անդամներին և հանրությանը,
- 22) ժողովին ներկայացնում է առաջարկություն անկախ աուդիտորի թեկնածուության վերաբերյալ,
- 23) որոշում է կայացնում Գործադիր կոմիտեի անդամի, ինչպես նաև ՀՖՖ-ի անդամների անդամության կասեցման վերաբերյալ,
- 24) իրականացնում է սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ, որոնք վերապահված չեն կանոնադրական այլ մարմիններին:

15. Գործադիր կոմիտեն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են Նախագահի կողմից առնվազն երեք ամիսը մեկ անգամ: Գործադիր կոմիտեի հերթական նիստի օրակարգի նախագիծը կազմվում է ՀՖՖ Նախագահի կողմից: Նիստի օրակարգի նախագիծը և համապատասխան նյութերը Գործադիր կոմիտեի անդամներին տրամադրվում են Գործադիր տնօրենի կողմից՝ նիստից առնվազն 7 օր առաջ: Գործադիր կոմիտեի անդամն իրավասու է նիստից առնվազն մեկ օր առաջ Գործադիր տնօրենին ներկայացնելու օրակարգային հարց, որը պետք է հաստատվի նիստի սկզբում:

16. ՀՖՖ Նախագահի կամ Գործադիր կոմիտեի որոշմամբ նիստին հրավիրյալի կարգավիճակով կարող են ներկա գտնվել այլ անձինք: Նրանք կարող են ելույթ ունենալ Գործադիր կոմիտեի կամ Նախագահի որոշմամբ:

17. Գործադիր կոմիտեի նիստն իրավագոր է եթե նիստին ներկա է Գործադիր կոմիտեի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

18. Գործադիր կոմիտեի նիստը վարում է ՀՖՖ Նախագահը, նրա հանձնարարությամբ փոխնախագահը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ Գործադիր կոմիտեի որոշմամբ Գործադիր կոմիտեի անդամը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ Գործադիր կոմիտեի տարիքով ավագ անդամը:

19. Գործադիր կոմիտեի նիստերը գումարվում են ՀՖՖ-ի նստավայրում, եթե այլ բան չի որոշված Գործադիր կոմիտեի կողմից: Նիստն սկսվում է օրակարգի հաստատմամբ: Մինչև օրակարգի հաստատումը այլ հարցեր չեն քննարկվում:

20. Նիստի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ, բացառությամբ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի: Ձայների հավասարության դեպքում Նախագահի ձայնը վճռորոշ է: Գործադիր կոմիտեի որոշումներն անմիջապես ուժի մեջ են մտնում, բացառությամբ այն դեպքերի, երբ Գործադիր կոմիտեն այդ կապակցությամբ այլ որոշում է ընդունում:

21. Գործադիր կոմիտեի անդամը պարտավոր է զերծ մնալ հարցերի քննարկմանը և քվեարկությանը մասնակցությունից, եթե հնարավոր է որևէ շահերի բախում: Մնացած բոլոր դեպքերում Գործադիր կոմիտեի անդամը պետք է մասնակցի քվեարկությանը:

22. Գործադիր տնօրենը մասնակցում է Գործադիր կոմիտեի նիստին խորհրդակցական ձայնի իրավունքով:

23. Գործադիր կոմիտեի նիստերը արձանագրվում են, որոնք ստորագրվում ՀՖՖ Նախագահի կողմից: Արձանագրությունները վերջնականապես հաստատվում են Գործադիր կոմիտեի հաջորդ նիստում:

24. Գործադիր կոմիտեի արտահերթ նիստ հրավիրվում է Գործադիր կոմիտեի անդամների 1/3-ի գրավոր պահանջով կամ Նախագահի նախաձեռնությամբ: Արտահերթ նիստ հրավիրելու համար Գործադիր կոմիտեի անդամների 1/3-ը գրավոր դիմում են Գործադիր տնօրենին՝ դիմումին կցելով արտահերթ ժողովի օրակարգի նախագիծը, հիմնավորումները և համապատասխան նյութերը: Դիմումն ստանալուց հետո Նախագահը 20 օրվա ընթացքում հրավիրում է արտահերթ նիստ՝ օրակարգում առնվազն ընդգրկելով անդամների ներկայացրած հարցերը: Նշված ժամկետում արտահերթ նիստ չհրավիրելու դեպքում դիմումը ստորագրած անդամներն իրենց նախաձեռնությամբ, իրենց սահմանած ժամկետում և օրակարգով հրավիրում են արտահերթ նիստ՝ այդ մասին անհապաղ գրավոր ծանուցելով Նախագահին և գործադիր տնօրենին: Արտահերթ նիստի որոշված օրակարգը փոփոխման ենթակա չէ: Արտահերթ նիստում հարցերը քննարկվում և որոշումներն ընդունվում են հերթական նիստի համար սահմանված կարգով:

## X. ՆԱԽԱԳԱՀԸ

1. Նախագահը ՀՖՖ-ի բարձրագույն պաշտոնատար անձն է, ով ներկայացնում է ՀՖՖ-ն ՀՀ-ում, արտերկրում և միջազգային կազմակերպությունների հետ հարաբերություններում:

2. Նախագահը՝

- 1) Առանց լիազորագրի գործում է ՀՖՖ-ի անունից, ներկայացնում է դրա շահերը, կնքում է պայմանագրեր, տալիս է լիազորագրեր, այդ թվում վերալիազորման

իրավունքով, վավերացնում է փաստաթղթեր, կատարում է ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, ՖԻՖԱ-ի և ՈԻԵՖԱ-ի համապատասխան կանոնակարգերով և փաստաթղթերով նախատեսված այլ քաղաքացիաիրավական բնույթի գործողություններ,

- 2) գումարում է Ժողովի և Գործադիր կոմիտեի նիստեր,
- 3) նախապատրաստում և վարում է ժողովի և Գործադիր կոմիտեի նիստերը,
- 4) Ժողովի և Գործադիր կոմիտեի հաստատմանն է ներկայացնում Ժողովի և Գործադիր կոմիտեի նիստերի օրակարգերի նախագծերը,
- 5) համակարգում և ղեկավարում է Գործադիր կոմիտեի աշխատանքները,
- 6) ապահովում է ժողովի և Գործադիր կոմիտեի որոշումների պատշաճ կատարումը,
- 7) ընթացք է տալիս և պատասխանում ՀՖՖ-ին ուղղված դիմումներին,
- 8) Գործադիր տնօրենի ներկայացմամբ հաստատում է ՀՖՖ-ի աշխատակազմի պաշտոնական գործառույթները, հաստիքացուցակը և աշխատավարձերի ցուցակը,
- 9) Գործադիր կոմիտեի հաստատմանն է ներկայացնում Գործադիր տնօրենի և նրա տեղակալների նշանակման կամ պաշտոնից հեռացման մասին առաջարկությունը,
- 10) իրականացնում է սույն կանոնադրությամբ և ՀՖՖ-ի այլ կանոնակարգերով նախատեսված այլ լիազորություններ:

3. Նախագահի բացակայության, պարտականությունների կատարման անհնարինության կամ նրա պաշտոնը թափուր մնալու դեպքում նրան փոխարինում է առաջին փոխնախագահը:

4. Իր լիազորությունների ժամկետի ընթացքում Նախագահը դադարեցնում է իր անդամությունը ՀՖՖ-ի անդամ կազմակերպությունում:

## **XI. ՀՖՖ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԸ**

1. Գործադիր տնօրենը ՀՖՖ-ի աշխատակազմի ղեկավարն է:

2. Գործադիր տնօրենը և նրա տեղակալները նշանակվում և պաշտոնից ազատվում են Գործադիր կոմիտեի կողմից՝ ՀՖՖ Նախագահի ներկայացմամբ:

3. Գործադիր տնօրենն աշխատում է քաղաքացիական իրավահարաբերությունների վերաբերյալ նորմերով կարգավորվող աշխատանքային պայմանագրի հիման վրա: Գործադիր տնօրենը պետք է ունենա կազմակերպական կանոնակարգերով պահանջվող անհրաժեշտ համապատասխան մասնագիտական որակավորում:

4. Գործադիր տնօրենի բացակայության կամ պարտականությունների կատարման անհնարինության դեպքում ՀՖՖ Նախագահի որոշմամբ նրան փոխարինում է Գործադիր տնօրենի տեղակալներից որևէ մեկը:

5. Գործադիր տնօրենն իր իրավասությունների սահմաններում, ՀՀ գործող օրենսդրության, սույն կանոնադրության և կազմակերպական կանոնակարգերի համաձայն՝

- 1) ղեկավարում է ՀՖՖ-ի աշխատակազմի աշխատանքը,
- 2) ընդունում և աշխատանքից ազատում է ՀՖՖ-ի աշխատակազմի հաստիքային աշխատողներին, անհրաժեշտության դեպքում նրանց հանդեպ կիրառում է կարգապահական տույժեր,
- 3) ապահովում է կապերը ՀՖՖ-ի անդամների, կոմիտեների, ՖԻՖԱ-ի և ՈԻԵՖԱ-ի, ինչպես նաև այլ ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ,

- 4) տնօրինում է ՀՖՖ-ի գույքը, կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային, տալիս է լիազորագրեր, ապահովում է լրացուցիչ ֆինանսական աղբյուրների և նյութական միջոցների ներգրավումը,
- 5) բանկային հաստատություններում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ և պատշաճ կերպով պահպանում և վարում է ՀՖՖ-ի հաշիվները,
- 6) ապահովում է Ժողովի, Գործադիր կոմիտեի և կոմիտեների նիստերի անցկացումը,
- 7) մասնակցում է Ժողովի, Գործադիր կոմիտեի նիստերին և կոմիտեների նիստերին, պատասխանատու է արձանագրությունների կազմման համար,
- 8) ապահովում է Ժողովի և Գործադիր կոմիտեի որոշումների պատշաճ իրագործումը,
- 9) Գործադիր կոմիտեի հաստատմանն է ներկայացնում ՖԻՖԱ-ի և ՈԻԵՖԱ-ի կոմիտեներում ներկայացուցիչների թեկնածությունները,
- 10) նշանակում է ՖԻՖԱ-ի և ՈԻԵՖԱ-ի խաղերի հետ կապված աշխատանքների համար պատասխանատու այլ անձանց:

## **XII. ՀՖՖ-ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ**

1. ՀՖՖ-ի աշխատակազմը Գործադիր տնօրենի ղեկավարման ներքո իրականացնում է ՀՖՖ-ի վարչական աշխատանքը:

2. ՀՖՖ-ի աշխատակազմի անդամները պարտավոր են պատշաճ կերպով կատարել սույն կանոնադրությունից, ՀՖՖ-ի այլ կանոնակարգերից, շրջաբերականներից, ինչպես նաև իրավասու մարմինների որոշումներից բխող պահանջները:

## **XIII. ՀՖՖ-ի ԻՐԱՎԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ**

1. ՀՖՖ-ի իրավական մարմիններն են.

- 1) կարգապահական մարմինները՝ Կարգապահական կոմիտեն և Բողոքարկման կոմիտեն,
- 2) ակումբների արտոնագրման մարմինները՝ Ակումբների արտոնագրման կոմիտեն և Արտոնագրման բողոքարկման կոմիտեն,
- 3) Վեճերի լուծման պալատը:

2. Իրավական մարմինների անդամները չեն կարող միաժամանակ լինել ՀՖՖ-ի որևէ այլ մարմնի կազմում:

3. Իրավական մարմինների կողմից կայացված որոշումները վերջնական են, և կարող են սահմանված ժամկետներում ներկայացվել միայն ՀՖՖ-ի կողմից ճանաչված արբիտրաժային դատարան՝ բացառելով ընդհանուր իրավասության դատարաններ դիմելը, եթե դա ուղղակիորեն արգելված չէ ՀՀ գործող օրենսդրությամբ:

## **XIV. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ**

1. Կարգապահական մարմիններից յուրաքանչյուրն ունի հետևյալ կազմը՝ նախագահ, փոխնախագահ և առնվազն երեք անդամ: Կարգապահական մարմինների նախագահները և փոխնախագահները պետք է ունենան բարձրագույն իրավաբանական կրթություն:

2. Կարգապահական մարմնի նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա են անդամների կեսից ավելին: ՀՖՖ Կարգապահական կանոնակարգով նախատեսված դեպքերում կոմիտեի նախագահն իրավասու է կայացնել միանձնյա որոշումներ:

3. Կարգապահական մարմիններն իրավասու են սույն Կանոնադրությամբ և ՀՖՖ Կարգապահական կանոնակարգով նախատեսված պատժամիջոցները կիրառել անդամների, պաշտոնատար անձանց, Ֆուտբոլիստների, ակումբների և խաղերի կամ Ֆուտբոլիստների գործակալների նկատմամբ:

4. Անդամների կասեցման և հեռացման մասով վերը նշված դրույթները չեն ազդում Ժողովի և Գործադիր կոմիտեի իրավասությունների վրա:

5. Բողոքարկման կոմիտեն քննում է Կարգապահական կոմիտեի վերջնական ուժի մեջ չմտած որոշումների դեմ ներկայացված բողոքները:

6. Կարգապահական մարմինների կազմը, պարտականությունները և լիազորությունները սահմանվում են ՀՖՖ Կարգապահական կանոնակարգով, որը հաստատվում է Գործադիր կոմիտեի կողմից և պետք է համապատասխանի ՖԻՖԱ-ի Կարգապահական կանոնակարգին:

## **XV. ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ**

1. Ակումբների արտոնագրման մարմիններն ունեն հետևյալ կազմը՝ նախագահ, փոխնախագահ և հինգ անդամ: Անդամներից առնվազն մեկը պետք է լինի հաշվապահ, իսկ մեկը՝ իրավաբան:

2. Ակումբների արտոնագրման մարմինների կազմը, պարտականությունները, լիազորությունները, ինչպես նաև որոշումների բողոքարկման կարգը սահմանվում են ՀՖՖ Ակումբների արտոնագրման համակարգի ուղեցույցով, որը հաստատվում է Գործադիր կոմիտեի կողմից և պետք է համապատասխանի ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի Ակումբների արտոնագրման կանոնակարգերին:

## **XVI. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

1. ՀՖՖ-ի մարմիններն իրենց լիազորությունների շրջանակներում իրավասու են կիրառելու հետևյալ կարգապահական միջոցները.

- 1) Ֆիզիկական և իրավաբանական անձանց համար.
  - ա) նախազգուշացում,
  - բ) նկատողություն,
  - գ) տուգանք,
  - դ) պարզևների վերադարձ:
- 2) Ֆիզիկական անձանց համար.
  - ա) զգուշացում,
  - բ) հեռացում,
  - գ) որակազրկում խաղի մասնակցությունից,
  - դ) արգելք հանդերձարան մտնելու և/կամ պահեստայինների նստարանին նստելու,
  - ե) արգելք մարզադաշտ մուտք գործելու,
  - զ) արգելք մասնակցելու ցանկացած տիպի ֆուտբոլային գործունեությանը:
- 3) Իրավաբանական անձանց համար.
  - ա) արգելք տրանսֆերային տեղափոխություն իրականացնելու,
  - բ) խաղի անցկացում առանց հանդիսատեսի,
  - գ) խաղի անցկացում չեզոք դաշտում,
  - դ) խաղի անցկացման արգելք որոշակի մարզադաշտում,

- ե) խաղի արդյունքների անվավեր ճանաչում,
- զ) հեռացում մրցաշարից,
- է) տեխնիկական պարտություն,
- ը) միավորների նվազեցում,
- թ) որակագրկում ավելի ցածր խումբ:

## **XVII. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՊԱԼԱՏԸ և ԱՐԲԻՏՐԱԺԸ**

1. Վեճերի լուծման պալատը՝ ակումբի և Ֆուտբոլիստի միջև աշխատանքային կամ պայմանագրային հարաբերություններից բխող, ինչպես նաև միևնույն ասոցիացիայի ակումբների միջև մարզումային փոխհատուցման և համերաշխության մեխանիզմի հետ կապված վեճերը լուծող մարմին է:

2. Վեճերի լուծման պալատի կազմը, իրավասությունները և դատավարական կանոնները սահմանվում են Գործադիր կոմիտեի կողմից ընդունվող առանձին կանոնակարգերով:

3. ՀՖՖ-ի, ՀՖՖ-ի անդամների, Ֆուտբոլիստների, պաշտոնատար անձանց, մրցախաղի ներկայացուցիչների, ֆուտբոլիստների գործակալների և խաղերի գործակալների միջև առաջացած ցանկացած վեճ, ինչպես նաև Վեճերի լուծման պալատի կողմից ընդունված որոշումների դեմ ներկայացված ցանկացած բողոք ենթակա է լուծման ՀՖՖ-ի կողմից ճանաչված անկախ և անաչառ արբիտրաժային դատարանում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա արգելված է ՀՀ օրենսդրությամբ:

4. Արբիտրաժային դատարանն իրավասու է քննելու միայն ազգային վեճերը:

5. Միջազգային վեճերի (տարբեր ասոցիացիաների և/կամ տարբեր կոնֆեդերացիաների կազմի մեջ մտնող կողմերի միջև ծագող վեճեր) վերջնական լուծումը՝ ԿԱՍ-ի իրավասությունն է:

## **XVIII. ՀՖՖ-Ի ՄՇՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԸ**

1. ՀՖՖ-ն ունի ինչպես մշտական, այնպես էլ ժամանակավոր կոմիտեներ, որոնք Գործադիր կոմիտեին կից են և ունեն խորհրդակցական կարգավիճակ՝ բացառությամբ, եթե կայացվում է այլ որոշում, և այդ մասին նախատեսվում են դրույթներ համապատասխան կոմիտեի կանոնակարգում:

2. ՀՖՖ-ում գործում են հետևյալ մշտական կոմիտեները.

- 1) Մանկապատանեկան ֆուտբոլի կոմիտե,
- 2) Իրավական կոմիտե,
- 3) Բժշկական կոմիտե,
- 4) Ֆուտզալի և կանանց ֆուտբոլի կոմիտե,
- 5) Մասսայական ֆուտբոլի կոմիտե,
- 6) Մրցավարական կոմիտե,
- 7) Ֆուտբոլիստների կարգավիճակի կոմիտե,
- 8) Ֆինանսական կոմիտե,
- 9) Ներքին աուդիտի կոմիտե:

3. Անհրաժեշտության դեպքում Գործադիր կոմիտեն կարող է կազմավորել նաև այլ մշտական կոմիտեներ, ինչպես նաև՝ կազմալուծել դրանք:

4. ՀՖՖ մշտական կոմիտեները ղեկավարում են նախագահները, ովքեր նշանակվում են Գործադիր կոմիտեի կողմից: Նրանք պետք է լինեն Գործադիր կոմիտեի անդամներ,

բացառությամբ Ներքին առևտրի կոմիտեի նախագահի՝ ով չի կարող լինել Գործադիր կոմիտեի կազմից:

5. Յուրաքանչյուր կոմիտեի նախագահ ղեկավարվում է կոմիտեի կանոնադրությամբ և կանոնակարգով՝ հաստատված Գործադիր կոմիտեի կողմից:

## **XIX. ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՖՈՒՏԲՈՒԼԻ ԿՈՄԻՏԵ**

1. Մանկապատանեկան ֆուտբոլի կոմիտեն աջակցում է մանկապատանեկան ֆուտբոլի զարգացմանը և զբաղվում մանկապատանեկան ֆուտբոլին առնչվող խնդիրներով:

2. Մանկապատանեկան ֆուտբոլի կոմիտեն բաղկացած է նախագահից և չորս անդամից:

3. Մանկապատանեկան ֆուտբոլի կոմիտեի իրավունքներն ու պարտականությունները կարգավորվում են Գործադիր կոմիտեի կողմից հաստատված կանոնակարգով:

## **XX. ԻՐԱՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ**

1. Իրավական կոմիտեն ուսումնասիրում է ֆուտբոլին առնչվող իրավական խնդիրները, ինչպես նաև ՀՖՖ-ի և վերջինիս անդամների կանոնադրություններում և կանոնակարգերում փոփոխությունները և լրացումները:

2. Իրավական կոմիտեն կազմված է նախագահից և երկու անդամից:

3. Իրավական կոմիտեի իրավունքները և պարտականությունները կարգավորվում են Գործադիր կոմիտեի կողմից հաստատված կանոնակարգով:

## **XXI. ԲԺՇԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ**

1. Բժշկական կոմիտեն զբաղվում է ֆուտբոլ խաղի հետ կապված բժշկական խնդիրներով:

2. Բժշկական կոմիտեն կազմված է նախագահից և երեք անդամից:

3. Բժշկական կոմիտեի իրավունքները և պարտականությունները կարգավորվում են Գործադիր կոմիտեի կողմից հաստատված կանոնակարգով:

## **XXII. ՖՈՒՏԶԱԼԻ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՖՈՒՏԲՈՒԼԻ ԿՈՄԻՏԵ**

1. Ֆուտզալի և կանանց ֆուտբոլի կոմիտեն աջակցում է ֆուտզալի և կանանց ֆուտբոլի զարգացմանը:

2. Ֆուտզալի և կանանց ֆուտբոլի կոմիտեն կազմված է նախագահից և չորս անդամից:

3. Ֆուտզալի և կանանց ֆուտբոլի կոմիտեի իրավունքները և պարտականությունները կարգավորվում են Գործադիր կոմիտեի կողմից հաստատված կանոնակարգով:

## **XXIII. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՖՈՒՏԲՈՒԼԻ ԿՈՄԻՏԵ**

1. Մասսայական ֆուտբոլի կոմիտեն աջակցում է մասսայական ֆուտբոլի զարգացմանը:

2. Մասսայական ֆուտբոլի կոմիտեն կազմված է նախագահից և չորս անդամից:

3. Մասսայական ֆուտբոլի կոմիտեի իրավունքները և պարտականությունները կարգավորվում են Գործադիր կոմիտեի կողմից հաստատված կանոնակարգով:

## **XXIV. ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ**

1. Մրցավարական կոմիտեն ապահովում է ֆուտբոլ խաղի կանոնների կիրառումը և պահպանումը: Կոմիտեն նշանակում է ՀՖՖ-ի կողմից կազմակերպվող խաղերի մրցավարներին, ՀՖՖ-ի աշխատակազմի հետ համագործակցությամբ կազմակերպում է մրցավարական գործընթացները և վերահսկում է մրցավարների որակավորման և վերապատրաստման աշխատանքները:

2. Մրցավարական կոմիտեն կազմված է նախագահից և վեց անդամից:

3. Մրցավարական կոմիտեի իրավունքները և պարտականությունները կարգավորվում են Գործադիր կոմիտեի կողմից հաստատված կանոնակարգով:

## **XXV. ՖՈՒՏԲՈՒԼԻՍՏՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԿՈՄԻՏԵ**

1. Ֆուտբոլիստների կարգավիճակի կոմիտեն ՖԻՖԱ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգերին համապատասխան սահմանում է տրանսֆերային տեղափոխությունների կանոնակարգեր և վերահսկում դրանց կատարումը, ինչպես նաև՝ որոշում է Ֆուտբոլիստների կարգավիճակը ՀՖՖ-ի տարբեր մրցումներում:

2. Ֆուտբոլիստների կարգավիճակի կոմիտեն կազմված է նախագահից և չորս անդամից:

3. Ֆուտբոլիստների կարգավիճակի կոմիտեի իրավունքները և պարտականությունները կարգավորվում են Գործադիր կոմիտեի կողմից հաստատված կանոնակարգով:

## **XXVI. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ**

1. Ֆինանսական կոմիտեն վերահսկում է ՀՖՖ ֆինանսական կառավարումը և Գործադիր կոմիտեին խորհրդատվություն է ներկայացնում ակտիվների կառավարման և ֆինանսների վերաբերյալ:

2. Ֆինանսական կոմիտեն կազմված է նախագահից, փոխնախագահից և երեք անդամից:

3. Ֆինանսական կոմիտեի իրավունքները և պարտականությունները կարգավորվում են Գործադիր կոմիտեի կողմից հաստատված կանոնակարգով:

## **XXVII. ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԿՈՄԻՏԵ**

1. Ներքին աուդիտի կոմիտեն ապահովում է ՀՖՖ-ի հաշվապահական հաշվառման վարման արժանահավատությունն ու ամբողջականությունը և Գործադիր կոմիտեի հանձնարարությամբ ստուգում է Անկախ աուդիտի ներկայացրած հաշվետվությունը:

2. Ներքին աուդիտի կոմիտեն կազմված է նախագահից, փոխնախագահից և երեք անդամից:

3. Ներքին աուդիտի կոմիտեի իրավունքները և պարտականությունները կարգավորվում են Գործադիր կոմիտեի կողմից հաստատված կանոնակարգով:

## **XXVIII. ՀՖՖ-Ի ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ**

1. ՀՖՖ-ն իր կանոնադրական նպատակները և խնդիրներն իրականացնելու համար կարող է ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և հիմնարկներ:

2. Ժողովն է իրավասու հիմնադրելու ՀՖՖ-ի առանձնացված ստորաբաժանումներ ու հիմնարկներ:

3. Ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ու հիմնարկների ղեկավարները նշանակվում և ազատվում են Գործադիր կոմիտեի կողմից՝ Նախագահի ներկայացմամբ: Ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ու հիմնարկների ղեկավարները գործում են համապատասխան կանոնադրությունների և ՀՖՖ Գործադիր տնօրենի կողմից տրված հրահանգների հիման վրա:

4. ՀՖՖ-ն Հայաստանի տարածքում իր գործունեությունն իրականացնում է իր ներկայացուցիչների միջոցով:

## **XXIX. ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՈՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ**

1. Ազգային և/կամ միջազգային մրցումներին մասնակցելու համար ֆուտբոլային ակումբներից կարող է պահանջվել ՀՖՖ-ի կողմից տրամադրվող արտոնագրի ստացում՝ ՀՖՖ-ի, ՈԻԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի կողմից հաստատված Ակումբների արտոնագրման կանոնակարգերին և մրցումների կանոնակարգերին համապատասխան:

2. ՀՖՖ-ն իրավասու է պահանջելու, որպեսզի ֆուտբոլային ակումբների տեխնիկական անձնակազմն ունենա համապատասխան մասնագիտական որակավորում և կրթություն: Պահանջները սահմանված են Գործադիր կոմիտեի կողմից հաստատված համապատասխան կանոնակարգերով, որոնք կարող են ներառել նաև ՀՖՖ-ում գրանցման կարգը:

## **XXX. ՄՐՑԱՇԱՐԵՐԻՑ, ՄՐՑՈՒՄՆԵՐԻՑ ԵՎ ԱՅԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ**

1. ՀՖՖ-ն կազմակերպում և համակարգում է իր տարածքում անցկացվող հետևյալ առաջնությունները՝

- 1) ֆուտբոլի, ֆուտզալի և լողափնյա ֆուտբոլի ազգային հավաքական թիմերի պաշտոնական և ընկերական հանդիպումները,
- 2) ֆուտբոլի, ֆուտզալի և լողափնյա ֆուտբոլի պրոֆեսիոնալ, սիրողական, մանկապատանեկան և կանանց հանրապետական առաջնությունները,
- 3) ֆուտբոլի, ֆուտզալի և լողափնյա ֆուտբոլի գավաթի և վերնագավաթի (սուպերգավաթի) խաղարկությունները,
- 4) ԻՖԱԲ-ի կողմից ընդունված՝ «Ֆուտբոլ խաղի կանոններով», ինչպես նաև ՖԻՖԱ-ի կողմից սահմանված՝ «Ֆուտզալի կանոններով» և «Լողափնյա ֆուտբոլի կանոններով» անցկացվող ցանկացած այլ կազմակերպված առաջնությունները, մրցաշարերը և հանդիպումները:

2. Գործադիր կոմիտեն իրավասու է ավելացնելու կամ վերացնելու ՀՖՖ-ի որոշակի մրցաշարեր և ընդունելու կոնկրետ մրցաշարերի վերաբերյալ կանոնակարգեր:

3. ՀՖՖ-ի առաջնությանը և ՀՖՖ-ի կողմից կազմակերպված այլ մրցաշարերին մասնակցելու ակումբի իրավունքը պայմանավորված է նրա մարզական ցուցանիշներով: Ակումբը ստանում է ՀՖՖ-ի կոնկրետ առաջնությանը մասնակցելու իրավունք՝ կամ մնալով որոշակի խմբում, կամ մրցաշրջանի վերջում տեղափոխվելով ավելի բարձր կամ ցածր խումբ:

4. Մարզական ցուցանիշների հիման վրա ակումբի որակավորումը հեշտացնելու նպատակով ակումբի կազմակերպաիրավական ձևը կամ կառուցվածքը փոխելը, ազգային առաջնությանը մասնակցելու արտոնագիրը վերափոխելը՝ ի վնաս ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող մրցաշարերի հեղինակության՝ արգելվում է (ներառյալ՝ օրինակ, անվանումը փոխելը կամ տարբեր ակումբների միջև սեփականության բաժնային մասնակցություն փոխադրելը):

5. Ակումբները պարտավոր են ՀՖՖ-ին նախապես տեղեկացնել ակումբի կազմակերպաիրավական ձևի կամ կառուցվածքի փոփոխության, հիմնական գրասենյակի փոփոխության, անվանման փոփոխության կամ տարբեր ակումբների միջև սեփականության բաժնային մասնակցություն փոխադրելու մասին:

6. ՀՖՖ-ն և նրա անդամները հանդիսանում են առաջնությունների, մրցաշարերի և մրցախաղերի, ինչպես նաև իրենց կանոնադրություններով նախատեսված այլ միջոցառումների կազմակերպումից և անցկացումից բխող բոլոր իրավունքների բացառիկ սեփականատերերը՝ առանց որևէ սահմանափակման: Այդ իրավունքները ներառում են նաև ֆինանսական իրավունքները, տեսալսողական և ռադիոձայնագրման իրավունքները, վերարտադրման և հեռարձակման իրավունքները, մուլտիմեդիական իրավունքները, շուկայավարման և գովազդի իրավունքները, ինչպես նաև մտավոր սեփականության և հեղինակային իրավունքից բխող իրավունքները:

7. Գործադիր կոմիտեն որոշում է սույն գլխի 6-րդ կետում նշված իրավունքների իրականացման կարգը և շրջանակները, և այդ նպատակով իրավասու է ընդունելու կանոնակարգեր: Միայն Գործադիր կոմիտեն է իրավասու կայացնելու որոշում այդ իրավունքների՝ ՀՖՖ-ի կողմից բացառիկ օգտագործման, երրորդ անձանց հետ համատեղ օգտագործման կամ ամբողջությամբ երրորդ անձանց օգտագործմանը հանձնելու մասին:

## **XXXI. ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ**

1. ՀՖՖ-ի հետ կապված ակումբները կամ անհատների խմբերը (օրինակ՝ մարզիչների և մրցավարների) ենթակա են և ճանաչվում են ՀՖՖ-ի կողմից: Նրանց կանոնադրությունները և կանոնակարգերը հաստատվում են Գործադիր կոմիտեի կողմից:

2. Մրցավարության, կարգապահության, հակախթանյութային, ակումբների արտոնագրման, Ֆուտբոլիստների գրանցման և մրցաշարերի անցկացման հետ կապված հարցերը ենթակա են ՀՖՖ-ի բացառիկ իրավասությանը:

3. ՀՖՖ-ի հետ կապված ակումբները (անկախ իրենց կազմակերպաիրավական տեսակից), ինչպես նաև անհատների խմբերն իրենց անդամության հետ կապված որոշումներն ընդունում են այլ մարմիններից անկախ:

4. Ֆիզիկական կամ իրավաբանական անձինք (այդ թվում՝ հոլդինգային ընկերությունները և դուստր ընկերությունները) իրավունք չունեն մեկից ավելի ակումբների նկատմամբ հսկողություն իրականացնել, եթե դրա հետևանքով կարող է վտանգվել որևիցե խաղի կամ մրցաշարի անաչառությունը:

## **XXXII. ԽԹԱՆՅՈՒԹԵՐԸ (ԴՈՊԻՆԳ)**

1. ՀՖՖ-ն պարտավորվում է պայքարել խթանյութերի օգտագործման դեմ՝ մարզական էթիկայի նորմերի երաշխավորման, Ֆուտբոլիստների ֆիզիկական և հոգեբանական պաշտպանվածության ապահովման, ինչպես նաև մրցաշարերի մասնակիցներին հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով:

2. ՀՖՖ-ն պարտավորվում է գործել ՖԻՖԱ-ի կողմից ընդունված Խթանյութերի վերահսկողության կանոնակարգերին (Doping Control Regulations) և ՖԻՖԱ-ի Կարգապահական կանոնակարգի (Disciplinary Code)՝ խթանյութերի վերաբերյալ դրույթներին և Խթանյութերի դեմ պայքարի համաշխարհային կանոնակարգի դրույթներին (World Anti-Doping Code) համապատասխան:

3. ՀՖՖ-ն պարտավոր է ՖԻՖԱ-ի պաշտոնական լեզուներից որևէ մեկով ՖԻՖԱ-ին և ՎԱԴԱ-ին տրամադրել խթանյութերի հետ կապված այն որոշումների կրկնօրինակները, որոնք մտել են ուժի մեջ: ՀՖՖ-ն ճանաչում է, որ ՖԻՖԱ-ն և ՎԱԴԱ-ն իրավունք ունեն բողոքարկել ԿԱՍ:

### **XXXIII. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ**

1. ՀՖՖ-ն կարող է որպես սեփականություն ունենալ շենքեր, այլ շինություններ, բնակարանային ֆոնդ, տրանսպորտի միջոցներ, բաժնետոմսեր, այլ արժեթղթեր, գույք և դրամական միջոցներ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական խնդիրների իրականացման համար:

2. ՀՖՖ-ի սեփականությունը գոյանում է հետևյալ աղբյուրներից.

- 1) անդամների մուտքավճարներից և անդամավճարներից,
- 2) նվիրատվություններից և նվիրաբերություններից,
- 3) ազգային հավաքական թիմերի ֆուտբոլի աշխարհի ու Եվրոպայի առաջնությունների ընտրական մրցումներից, հանրապետության գավաթի եզրափակիչ խաղից, ընկերական հանդիպումներից ստացված եկամուտներից,
- 4) ՀՖՖ-ի կողմից անցկացված այլ մարզական միջոցառումներից, դասախոսություններից և ցուցահանդեսներից,
- 5) ՀՖՖ-ի կողմից ստեղծված տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեության եկամուտներից,
- 6) արժեթղթերից և այլ ներդրումներից ստացված եկամուտներից,
- 7) օրենսդրությամբ չարգելված դրամական և գույքային այլ մուտքերից:

3. ՀՖՖ-ի դրամական և այլ գույքային միջոցները կարող են օգտագործվել միայն ՀՖՖ-ի կանոնադրությամբ սահմանված խնդիրների կատարման համար:

### **XXXIV. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ՖԻՆԱՆՍՆԵՐԸ ԵՎ ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏ**

1. ՀՖՖ-ն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և պետական մարմիններին ներկայացնում համապատասխան հաշվետվություններ:

2. ՀՖՖ-ի ֆինանսական տարին մեկ օրացուցային տարի է, որն սկսվում է հունվարի 1-ին և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

3. ՀՖՖ-ի եկամուտները և ծախսերը պետք է հաշվեկշռվեն տվյալ ֆինանսական ժամանակաշրջանում: ՀՖՖ-ի հետագա հիմնական պարտավորությունները երաշխավորվում են պահուստների ստեղծմամբ:

4. Գործադիր տնօրենը պատասխանատու է յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՖՖ-ի և դրա հիմնարկների տարեկան համախմբված հաշիվների կազմման համար:

5. ՀՖՖ-ն կատարում է.

- 1) բյուջեով նախատեսված ծախսերը,
- 2) ընդհանուր ժողովի կողմից հաստատված այլ ծախսերը,

3) Գործադիր կոմիտեի կողմից իր լիազորությունների շրջանակներում հաստատված ծախսերը,

4) ՀՖՖ-ի կանոնադրական նպատակներից բխող այլ ծախսեր:

6. Գործադիր կոմիտեի առաջարկությամբ Ժողովը հաստատում է անդամավճարի չափը յուրաքանչյուր 4 տարվա համար: Այն հավասար է յուրաքանչյուր անդամի համար և չպետք է գերազանցի նվազագույն աշխատավարձի 300-ապատիկը:

7. ՀՖՖ-ն իրավասու է դեբետագրելու ՀՖՖ-ում անդամների հաշիվները և պարտագրելու անդամների ակտիվները՝ ՀՖՖ-ի նկատմամբ անդամների պարտավորությունները բավարարելու նպատակով:

8. ՀՖՖ-ն իրավասու է իր անդամներից գանձելու մասհանումներ նրանց կողմից անցկացված մրցախաղերից ստացված եկամուտներից:

9. Նշանակված անկախ աուդիտորի լիազորությունների ժամկետը մեկ տարի է, որից հետո այն կարող է երկարաձգվել: Նա իր գործառույթները կատարում է աուդիտի ստանդարտներին համապատասխան և զեկույց է ներկայացնում հերթական Ժողովին:

### **XXXV. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽԱՂԵՐԸ ԵՎ ՄՐՑԱՇԱՐԵՐԸ**

1. Ասոցիացիաների թիմերի միջև, լիգաների և/կամ ակումբային թիմերի միջև միջազգային խաղերի և մրցաշարերի կազմակերպումը ՖԻՖԱ-ի և/կամ ՈՒԵՖԱ-ի բացառիկ իրավասությունն է: Այդպիսի խաղ կամ մրցաշար չի կարող անցկացվել առանց ՖԻՖԱ-ի նախօրոք տրված թույլտվության: Այդ դեպքում ՖԻՖԱ-ի կանոնակարգերի համաձայն կարող է պահանջվել նաև ՈՒԵՖԱ-ի թույլտվությունը:

2. ՀՖՖ-ն պարտավոր է առաջնորդվել ՖԻՖԱ-ի կողմից կազմված միաջազգային խաղերի օրացույցով:

3. Առանց ՖԻՖԱ-ի նախնական համաձայնության ՀՖՖ-ն, իր անդամները և Ֆուտբոլիստներն իրավունք չունեն անցկացնել խաղեր, իսկ պաշտոնատար անձինք և խաղերի և Ֆուտբոլիստների գործակալները՝ իրավունք չունեն ունենալ մարզական հարաբերություններ այն ասոցիացիաների հետ, որոնք ՖԻՖԱ-ի անդամ չեն, կամ կոնֆեդերացիայի ժամանակավոր անդամ են:

4. Առանց ՖԻՖԱ-ի, ՀՖՖ- և այլ ասոցիացիաների համաձայնության, ՀՖՖ-ի տարածքային գրանցում ունեցող ակումբները, լիգաները կամ ակումբային այլ խմբերը չեն կարող պատկանել այլ ասոցիացիայի կամ մասնակցել այլ ասոցացիաների տարածքներում կազմակերպված մրցաշարերին:

### **XXXVI. ՀՖՖ-ի ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

1. ՀՖՖ-ի վերակազմակերպումը (միաձուլումը, միացումը) կատարվում է օրենքով նախատեսված դեպքերում, Ժողովի որոշման հիման վրա կամ դատական կարգով:

2. ՀՖՖ-ն վերակազմակերպված է համարվում նոր առաջացած կազմակերպության՝ օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

3. ՀՖՖ Նախագահը պարտավոր է Ֆեդերացիայի վերակազմակերպման մասին հինգ օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել Ֆեդերացիայի պարտատերերին:

## **XXXVII. ՀՖՖ-ի ԼՈՒԾԱՐՈՒՄԸ**

1. ՀՖՖ-ի լուծարումը հանգեցնում է նրա գործունեության դադարեցմանը՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

2. ՀՖՖ-ն կարող է լուծարվել՝

1) Ժողովի որոշմամբ,

2) դատարանի կողմից ՀՖՖ-ի գրանցումն անվավեր ճանաչելու դեպքում՝ կապված այն ստեղծելու ժամանակ օրենքի կամ այլ իրավական ակտերի թույլ տրված խախտումների հետ,

3) դատարանի վճռով, առանց թույլտվության (լիցենզիայի) կամ օրենքով արգելված գործունեություն իրականացնելու, օրենքի կամ այլ իրավական ակտերի բազմակի կամ կոպիտ խախտումների դեպքում,

4) օրենքով սահմանված այլ դեպքերում:

3. ՀՖՖ Նախագահը պարտավոր է ՀՖՖ-ի լուծարման մասին անհապաղ տեղեկացնել իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնին:

4. ՀՖՖ-ի լուծարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## **XXXVIII. ՉՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ («ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ»)**

Գործադիր կոմիտեն իրավասու է որոշումներ կայացնելու սույն Կանոնադրությամբ չնախատեսված բոլոր հարցերի վերաբերյալ, ինչպես նաև՝ Ֆորմ-մաժորի դեպքում: Այդ որոշումները կայացվում են ՈՒԵՖԱ-ի կամ ՖԻՖԱ-ի համապատասխան կանոնակարգերի համաձայն: Եթե այդպիսի կանոնակարգեր չկան, ապա Գործադիր կոմիտեն վերոհիշյալ որոշումները կայացնում է՝ առաջնորդվելով իրավունքի և արդարության սկզբունքներով:

## **XXXIX. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ**

Սույն Կանոնադրությունն ընդունվել է Ժողովի կողմից 2010 թվականի Նոյեմբերի 27-ին և ուժի մեջ է մտել 2011 թվականի Հունվարի 1-ից:

## **XXXX. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

Բոլոր այն վեճերը որոնք առաջացել են մինչև սույն Կանոնադրության ուժի մեջ մտնելը, ենթակա են լուծման նախկինում գործող Կանոնադրությամբ և կանոնակարգերով սահմանված կարգով:

**Մույն Կանոնադրությունն ընդունվել է ՀՏՖ-ի հետևյալ անդամների կողմից.**

1. «Փյունիկ Ֆուտբոլային Ակումբ» ՀԿ
2. ««Զվարթնոց-ՀԱՌԻ» Ֆուտբոլային Ակումբ» ՀԿ
3. «Դինամո 2000» Ֆուտբոլային Ակումբ ՀԿ
4. ««Շիրակ» Ֆուտբոլային Ակումբ» ՀԿ
5. ««Լոկոմոտիվ » Ֆուտբոլային Ակումբ» ՀԿ
6. ««Արմավիր» Ֆուտբոլային Ակումբ» ՀԿ
7. ««Գանձասար» Ֆուտբոլային Ակումբ» ՀԿ
8. «Հայք» Ֆուտբոլային Ակումբ ՀԿ
9. «Կանանց ֆուտբոլի և ֆուտզալի ասոցիացիա» ՀԿ
10. «Ֆուրման Արբահամյան» Մանկապատանեկան Ֆուտբոլային Ակումբ ՀԿ
11. «Միկա» Ֆուտբոլային Ակումբ ՀԿ
12. «Բանանց» Ֆուտբոլային Ակումբ ՀԿ
13. «Լոռի» Ֆուտբոլային Մարզական Ակումբ ՀԲԿ
14. ««Աչաջուր» Ֆուտբոլային Ակումբ» ՀԿ
15. «Էստեղլալ Կոտայք Ֆուտբոլային Ակումբ» ՀԿ
16. «Հայ-Արի» Ֆուտբոլային Ակումբ ՀԿ
17. ««Ուլիս» Ֆուտբոլային Ակումբ» ՀԿ